

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ  
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՊՐԱԿՏԻԿԱ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ**

*Երախտիքի խոսք*

Սույն մեթոդաբանական նյութը կազմվել է Հարավային Կովկասում աղքատության ծրագրային ուսումնասիրության աշխատանքի շրջանակներում (P171133): Վերլուծությունն իրականացվել է աղքատության ազգային գծերը վերանայելու գործում ԱՐՄՍՍՍՍ-ին աջակցության նպատակով: Համաշխարհային բանկի աշխատանքային խումբը երախտապարտ է ՀՀ կառավարության գործընկերներին իրենց արժեքավոր մասնակցության համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը (ՊԳԿ) արժեքավոր քննարկումների համար:

Ձեկույցը պատրաստվել է Ալան Ֆուքսի (ավագ տնտեսագետ, EECPV) և Դիրաջ Շարմայի (տնտեսագետ, ECCPV) գլխավորած աշխատանքային խմբի կողմից, որի կազմում եղել են Մարիա Ֆերնանդա Գոնսալես Իկագան (ETC, EPVGE), Քաթերին Յանեթ Ռամիրես Նիետոն (խորհրդատու, EPVGE) և Լաքսման Թիմիլսինան (խորհրդատու, EPVGE): Աշխատանքներն իրականացվել են Սալման Չախիդի (պրակտիկայի ղեկավար, EECPV), Սիլվի Բոստրոյի (Հայաստանյան գրասենյակի ղեկավար) և Եվգենի Նաջդովի (ծրագրի ղեկավար, EECDR) ղեկավարությամբ: Գրախոսողներն են Սեզար Քանչոն (ավագ տնտեսագետ, ESAPV) և Գաբրիել Լարա Իբարան (ավագ տնտեսագետ, ELCPV):

Աշխատանքային խմբին հմտորեն օժանդակել է Արմանդա Կարկանին (ծրագրի օգնական, EECPV):

### **Համառոտ ամփոփագիր**

Հանրության շրջանում աղքատության վերացումը և անհավասարության նվազեցումը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ոլորտային քաղաքականության կարևորագույն նպատակներից են: Այդ նպատակների իրագործման առաջընթացը մշտադիտարկման ենթարկելու և փաստերի վրա հիմնված հանրային քաղաքականության ձևավորմանն աջակցելու համար տնտեսական բարեկեցության ու աղքատության մակարդակի գնահատումը պետք է լինի ճշգրիտ և ժամանակին: Բացի այդ, աղքատության և անհավասարության մշտադիտարկումը պահանջում է մեթոդաբանության ու տվյալների հավաքման գործընթացի պարբերական վերանայում՝ բնակչության ներկա կարիքները, նախասիրություններն ու կենսամակարդակն արտացոլելու նպատակով:

Բարեկեցությունը գնահատվում է երեք հիմնական քայլով: Առաջին քայլով սահմանվում է բարեկեցության ցուցանիշը (օրինակ՝ սպառման ագրեգատը): Երկրորդ քայլով սահմանվում է նվազագույն ընդունելի կենսամակարդակը կամ աղքատության գիծը: Վերջին քայլով համախմբվում է աղքատության գծի համեմատ բարեկեցության ցուցանիշի բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը՝ աղքատ և ոչ աղքատ բնակչությանը բնորոշելու համար:

ՀՀ-ում աղքատության գնահատականի հիմքում ընկած է «հիմնական կարիքների արժեքի» (ՀԿԱ) մեթոդը: ՀԿԱ-ի էությունը այն սպառողական զամբյուղի դրամական արժեքի գնահատումն է, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային և ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Աղքատ են համարվում այն տնային տնտեսությունները, որոնց բյուջեն/ սպառումն անբավարար է այդ զամբյուղի արժեքն ապահովելու համար:

Սույն նյութում ներկայացված է 2019 թվականի Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) տվյալների հիման վրա Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը: Մեթոդաբանության վերջին վերանայումը կատարվել է 2009 թվականի SSԿԱՀ-ի տվյալների հիման վրա: 2009-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ-ում աղքատության տարեկան գնահատումը հիմնված է եղել տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունների համեմատ աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ) կիրառությամբ: Այդուհանդերձ, 2019 թվականին սպառողական զամբյուղը և աղքատության գծերը վերանայվել են՝ արտացոլելով փոփոխություններն այնպիսի գործոնների մասով, ինչպիսիք են հայաստանյան հանրության շրջանում սպառման օրինաչափությունները, ծախսային վարքագիծը, բնակչության ժողովրդագրական կառուցվածքը և այլն: 2019 թվականի SSԿԱՀ-ի տվյալների հիման վրա հաշվարկված աղքատության մակարդակների ցուցանիշները տարբերվում են 2009 թվականից ի վեր հաշվարկված համապատասխան ցուցանիշներից երեք ատոմով. (ա) սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվել է SSԿԱՀ-ի վերանայված հարցաթերթի տվյալների հիման վրա, (բ) SSԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետի) միջոցով, և (գ) փոխվել են աղքատության գծերի հաշվարկման հիմքերը:

*Տնային տնտեսության բարեկեցության ցուցանիշի սահմանումը*

Հայաստանում տնային տնտեսությունների բարեկեցության աստիճանը որոշվում է մեկ չափահաս անձին համարժեք ընդհանուր ամսական սպառման արժեքի հաշվարկմամբ: Տնային տնտեսության սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվում է յուրաքանչյուր տարի՝ ելնելով սպառման վերաբերյալ ՏՏԿԱՀ-ի միջոցով հավաքված տվյալներից: Տնային տնտեսությունների հետազոտությամբ հավաքվում են տվյալներ ինչպես պարենային, այնպես էլ ոչ պարենային ապրանքների սպառման վերաբերյալ: Ըստ մեթոդաբանության՝ սպառման ագրեգացված ցուցանիշը ներառում է նաև սեփական արտադրության ապրանքները, ինչպես նաև մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը:

Սպառման պարենային և ոչ պարենային բաղադրիչները տարբեր կերպ են գնահատվում: Պարենային բաղադրիչի համար ՏՏԿԱՀ 2019-ով տնային տնտեսություններից պահանջվում է լրացնել օրագիր՝ 14 օրվա ընթացքում մուտքագրելով տվյալներ օրական սպառված սննդի քանակի վերաբերյալ: Պարենային ապրանքների սպառումն այնուհետև բերվում է գումարային տեսքի՝ յուրաքանչյուր ապրանքի համար նշելով միավոր գինը: Միավոր գները հաշվարկվում են տեղական մակարդակով՝ օգտագործելով փաստացի գնումների վերաբերյալ օրագրում լրացված տեղեկությունները:

Ոչ պարենային սպառումը ներառում է ապրանքների և ծառայությունների հետևյալ տեսակները. ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշիկներ, կենցաղային ապրանքներ, տրանսպորտ, կոմունալ ծառայություններ, հանգստի, կրթության և առողջապահության ծառայություններ: Այն ներառում է նաև անվճար ստացված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման արժեքը: Երկարաժամկետ օգտագործման ապրանքների օգտագործման արժեքը, կամ որ նույնն է՝ տնային տնտեսության կողմից գնված և տնօրինվող երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտների արժեքը նույնպես ավելացվում է սպառման ոչ պարենային բաղադրիչին:

Սպառման ագրեգատի անվանական ցուցանիշը գների երկչափ դեֆլյատորի միջոցով ենթարկվում է դեֆլյացիայի՝ եռամսյակների, մարզերի և քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև գների տարբերություններն արտացոլելու համար: Համախառն սպառման ագրեգատն այնուհետև արտահայտվում է միջին հանրապետական տարեկան գների մակարդակներով: Սպառման ագրեգատը ճշգրտվում է նաև հաշվի առնելով տնային տնտեսության ինչպես մասշտաբից բխող տնտեսումները, այնպես էլ անդամների կազմով պայմանավորված կարիքների տարբերությունը: Տնային տնտեսության համախառն սպառումը բաժանելով մեկ չափահաս անձին համարժեք անդամների թվաքանակին՝ ստանում ենք տնային տնտեսության սպառման ագրեգատի ցուցանիշը, որի հիման վրա կատարվում է աղքատության և անհավասարության վերլուծությունը: Վերջում նաև ճշգրտում է կատարվում տնային տնտեսության անդամների՝ հարցման ժամանակահատվածում տնից բացակայած օրերի քանակը հաշվի առնելու համար:

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

*Աղքատության չորս գծերի սահմանումը*

Աղքատության գիծը դրամական արտահայտությամբ սահմանում է (պարենային և ոչ պարենային) ապրանքների և ծառայությունների արժեքը, որն անհրաժեշտ է տվյալ երկրում կենսամակարդակի նվազագույն մակարդակի պահանջները բավարարելու համար: Նվազագույն սպառողական զամբյուղը ներառում է երկու բաղադրիչ՝ նվազագույն պարենային զամբյուղը և հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառումը:

Հայաստանում հաշվարկվում է աղքատության չորս տարբեր գիծ.

ա) պարենային աղքատության գիծ,

բ) աղքատության ստորին գիծ, որը հաշվարկվում է պարենային աղքատության գծին հիմնական ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման փոքր մասնաբաժին ավելացնելու միջոցով,

գ) աղքատության վերին գիծ, որը հաշվարկվում է պարենային աղքատության գծին հիմնական ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման մեծ մասնաբաժին ավելացնելու միջոցով,

դ) աղքատության միջին գիծ, որն աղքատության ստորին և վերին գծերի միջինն է:

Պարենային աղքատության գիծն արտացոլում է օրվա ընթացքում մեկ միջին անհատի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն էներգիայի պահանջը (ՆԷՊ) բավարարող սպառումը: Հայաստանի ժողովրդագրական առանձնահատկություններից ելնելով՝ 2019 թվականին մեկ անձի համար օրական միջին ՆԷՊ-ը հաշվարկվել է 2 307 կիլոկալորիայի (կկալ) չափով: Պարենային աղքատության գիծն այնուհետև հաշվարկվում է «հիմնական կարիքների արժեքի» մեթոդով՝ որպես այդ նվազագույն պահանջն ապահովելու համար անհրաժեշտ ծախս: Այլ խոսքով՝ հաշվարկվում է, թե Հայաստանում որքան արժե 2 307 կալորիա պարունակող պարենային զամբյուղ գնելը: Պարենային աղքատության գիծն արտացոլում է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը, որը սահմանվում է ըստ համեմատվող բնակչության փաստացի սպառման օրինաչափությունների:

Ցածր եկամուտ ունեցող երկրներում տիպիկ տնային տնտեսության պարենային զամբյուղի արժեքը գնահատելու համար օգտագործվում է սպառման երկրորդ, երրորդ կամ չորրորդ դեցիլային խմբերին պատկանող տնային տնտեսությունների միջին զամբյուղը: Պարենային աղքատության գիծը 2019 թվականի համար գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով ամսական 23 763 ՀՀ դրամ, իսկ պարենային աղքատության մակարդակը՝ բնակչության 1.4%-ը:

Հիմնական սննդային կամ պարենային կարիքներից բացի՝ մարդիկ ունեն ոչ պարենային կարիքներ: Պարենային աղքատության գիծը սահմանելուց հետո հաշվարկվում են երկու լրացուցիչ շեմեր կամ աղքատության գծեր՝ նվազագույն պարենային զամբյուղի արժեքին ավելացնելով ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառման որոշակի մասնաբաժին: Այս համատեքստում օգտագործվում է ոչ պարենային սպառման մասնաբաժինը որոշելու երկու մեթոդ: Աղքատության ստորին գիծը սահմանելու համար հաշվարկվում է այն տնային տնտեսությունների ոչ պարենային մեղիան սպառումը, որոնց մեկ չափահաս անձին համարժեք **համախառն սպառումը** գտնվում է պարենային աղքատության գծից փոքր հեռավորության (5%) միջակայքում: Այդ մեղիան

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

սպառումն ավելացվում է պարենային աղքատության գծին՝ աղքատության ստորին գիծը ստանալու համար:

2019 թվականի համար գնահատված աղքատության ստորին գիծը մեկ չափահաս անձի հաշվով ամսական 35 054 ՀՀ դրամ է, իսկ աղքատության ստորին գծով հաշվարկված մակարդակը՝ բնակչության 10.2%-ը: Նմանապես, աղքատության վերին գիծը սահմանելու համար հաշվարկվում է այն տնային տնտեսությունների ոչ պարենային մեղիան սպառումը, որոնց մեկ չափահաս անձին համարժեք **պարենային սպառումը** գտնվում է պարենային աղքատության գծից փոքր հեռավորության (5%) միջակայքում: Այդ մեղիան սպառումն ավելացվում է պարենային աղքատության գծին՝ աղքատության վերին գիծը ստանալու համար:

Այս մոտեցմամբ, 2019 թվականի համար գնահատված աղքատության վերին գիծը մեկ չափահաս անձի հաշվով ամսական 53 043 ՀՀ դրամ է, իսկ աղքատության վերին գծով հաշվարկված մակարդակը՝ բնակչության 43.8%-ը:

Միաժամանակ, հաշվարկվում է աղքատության միջին գիծ, ինչը ստորին և վերին գծերի միջինն է և մեկ չափահաս անձի հաշվով ամսական 44 048 դրամ է, իսկ միջին աղքատության մակարդակը՝ բնակչության 26.4 %-ն է:

## Ներածություն

Աղքատությունը, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել որպես «բարեկեցության տեսանկյունից դրսևորված զրկանք» (Հաֆթոն և Խանդկեր, 2009թ.): Այս ընդհանուր բնորոշումը, սակայն, ներառում է աղքատության բազմաթիվ ընկալումներ, սահմանումներ ու չափումներ: Ավանդաբար աղքատությունը դիտվում է որպես ապրանքների տիրապետման անբավարար մակարդակ, այնպես որ բավարար եկամուտ կամ սպառում չունեցող տնային տնտեսությունները համարվում են աղքատ: Աղքատությունը կարող է բնորոշվել նաև առանձին ապրանքների տեսանկյունից, ինչպիսիք են սնունդը, էլեկտրաէներգիան և բնակության պայմանները: Ըստ հնարավորությունների մոտեցման՝ աղքատությունը գնահատվում է հասարակության մեջ անհատի գործելու ունակության տեսանկյունից (Մեն, 1985թ.): Այդ մոտեցման համաձայն, ոչ համարժեք եկամուտներ, կրթություն, քաղաքական ազատություններ կամ վատ առողջական վիճակ ունեցող մարդիկ որոշակի առումներով զրկված են, ինչը նրանց խանգարում է բարեկեցիկ կյանքով ապրել: Աղքատության գնահատման այս կամ այն մոտեցումը որդեգրելու վերաբերյալ որոշումը դուրս է տեխնոկրատական վարժության շրջանակից և պետք է կայացվի հասարակության մեջ այդ հարցի շուրջ առկա փոխհամաձայնության հիմքի վրա:

Աղքատության գնահատականի հիմքում ընկած է «հիմնական կարիքների արժեքի» (ՀԿԱ) մեթոդը: Ըստ ՀԿԱ մեթոդի, նախ որոշվում է էներգիայի օրական նվազագույն պահանջը (կիրկալորիաներով)՝ հիմնվելով բնակչության ժողովրդագրական կառուցվածքի և ֆիզիկական ակտիվության մակարդակի վրա: Այնուհետև համեմատվող բնակչության սննդակարգը հաշվի առնելով հաշվարկվում է սննդի նվազագույն ծախսը, որն անհրաժեշտ է էներգիայի օրական պահանջը բավարարելու համար: Այս ծախսի դրամական արժեքը պարենային աղքատության գիծն է: Վերջում պարենային աղքատության գծին ավելացվում է այնպիսի ոչ պարենային հիմնական կարիքների սպառման մասնաբաժինը, ինչպիսիք են, օրինակ, կոմունալ ծառայությունները և հագուստը, ինչը թույլ է տալիս հաշվարկել հանրության շրջանում նվազագույն կենսամակարդակի չափանիշին բավարարելու համար անհրաժեշտ ծախսերը: Աղքատության գիծը երկրից երկիր տարբերվում է, քանի որ այն հիմնված է տվյալ երկրում սպառման օրինաչափությունների, նախասիրությունների և սովորությունների, ինչպես նաև հանրության շրջանում ընդունելի կենսամակարդակի վերաբերյալ առկա պատկերացումների վրա:

Հայաստանում աղքատության ազգային գծերը վերջին անգամ սահմանվել են 2009 թվականի Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքում ստացված տվյալների հիման վրա: Այդ գծերի հաշվարկման հիմքում նույնպես ընկած է եղել ՀԿԱ մեթոդը, որն ի վերջո հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Այդ ժամանակից ի վեր Հայաստանում աղքատության տարեկան գնահատումը հիմնված է եղել աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ) կիրառությամբ: Գնաճի համեմատ այս ճշգրտումը հաշվի է առնում տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունները՝ անփոփոխ պահելով աղքատության գծերի իրական արժեքը: Այդուհանդերձ, այս ճշգրտումը հաշվի չի առնում իրական կյանքում սպառման օրինաչափությունների փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Տնտեսության աճին և բնակչության հարստանալուն զուգընթաց տնային տնտեսությունների սպառման մեջ պարենային ապրանքների մասնաբաժինը, ընդհանուր առմամբ, նվազում է, իսկ ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը սովորաբար աճում է: Միևնույն

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Ժամանակ, մարդկանց սննդակարգը նույնպես կարող է փոխվել, օրինակ՝ մսի և կենդանական սպիտակուցային ծագման սննդամթերքի սպառման մասնաբաժնի ավելացման արդյունքում: Այս փոփոխություններն ազդում են ինչպես մեկ կալորիայի արժեքի, այնպես էլ ոչ պարենային ապրանքներին առնչվող ծախսային վարքագծի վրա: Որքան հեռանում ենք տվյալների հավաքման տարվանից, այնքան աղքատության գծերը նվազ ճշտությամբ են արտացոլում բնակչության շրջանում սպառման օրինաչափությունները և նվազագույն սպառման շեմը: Հետևաբար, աղքատության գծերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ սպառման օրինաչափություններին, նախասիրություններին և սովորություններին, ինչպես նաև բնակչության ժողովրդագրական կառուցվածքին համարժեքությունն ապահովելու համար: Հայաստանում աղքատության գծերի վերջին սահմանումից հետո արդեն 10 տարի էր անցել, ուստի պատեհ ժամանակն էր օգնելու ՀՀ կառավարությանը՝ ամենաթարմ տվյալների հիման վրա աղքատության ազգային գծերը վերանայելու հարցում:


SSԿԱՀի 2019-ում փոխվել են հարցաթերթի կառուցվածքը և տվյալների հավաքման եղանակը: Մինչև 2018 թվականը պարենային ծախսերի և սպառման վերաբերյալ տվյալները հավաքվում էին 30-օրյա օրագրի միջոցով, որում տնային տնտեսությունները գրանցում էին իրենց սպառողական ծախսերը: 2019 թվականից սկսած պարենային ծախսերի հաշվառման օրագրի վարման տևողությունը կրճատվեց՝ դառնալով երկու շաբաթ (կամ 14 օր): Սպառողական ծախսերի վերաբերյալ մի քանի մոդուլներ, որոնք նախկինում օրագրի մաս էին կազմում, ստացան ոչ օրագրային մոդուլի կարգավիճակ. դրանց թվում էին առողջապահության, կապի ծառայությունների և կրթության վերաբերյալ մոդուլները: Վերջապես, մինչև 2018 թվականը ոչ օրագրային մոդուլների տվյալները հավաքվում էին թղթային եղանակով, մինչդեռ 2019 թվականին անցում կատարվեց գրասալիկի (պլանշետի) միջոցով տվյալների հավաքման եղանակին<sup>1</sup>: Օրագրի վարման ժամանակահատվածի և հետազոտության եղանակի փոփոխությունները կարող են որոշակի ազդեցություն ունենալ սպառման վերաբերյալ ձեռք բերված տվյալների վրա:

### **Գլուխ 1. Սպառման ազդեցատի սահմանումը**

Բարեկեցությունը գնահատվում է երեք հիմնական քայլով (Հաֆթոն և Խանդկեր, 2009թ.): Առաջին քայլով սահմանվում է բարեկեցության ցուցանիշը (օրինակ՝ սպառման ազդեցատը): Երկրորդ քայլով սահմանվում է նվազագույն ընդունելի կենսամակարդակը կամ աղքատության գիծը: Վերջին քայլով համախմբվում է աղքատության գծի համեմատ բարեկեցության ցուցանիշի բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը (որոշվում է աղքատության մակարդակը):

<sup>1</sup> Սննդամթերքի սպառման վերաբերյալ օրագիրը շարունակել է վարվել թղթային եղանակով:

**Գծապատկեր 1. Բարեկեցության գնահատման քայլերը**



Հայաստանում բարեկեցությունն ավանդաբար գնահատվել է ըստ տնային տնտեսությունների սպառման ցուցանիշների: Վերլուծության համար տնային տնտեսությունների սպառումը հիմք ընդունելու առավելությունն այն է, որ սպառումը տարվա ընթացքում կամ տարեցտարի մնում է համեմատաբար կայուն, մինչդեռ բարեկեցության դրամական գնահատման այլընտրանքային միջոցները, օրինակ՝ եկամուտը, կարող է ամսեամիս կամ տարեցտարի փոփոխվել: Տնային տնտեսությունները թերևս նաև ավելի հակված են ճիշտ տեղեկություններ հայտնել սպառման մասին: Տնային տնտեսության սպառումը գնահատելու համար անհրաժեշտ է համախմբել և ըստ արժեքների տարբերակել սպառված ապրանքների և ծառայությունների դասերը կամ խմբերը: Սպառման ցուցանիշը կարող է նաև ճշգրտվել, որպեսզի ապահովի տնային տնտեսությունների բարեկեցության մակարդակի համադրելիությունը՝ անկախ նրանց գտնվելու վայրից, հարցազրույցի ժամանակից կամ տնային տնտեսության կազմից: Հաջորդ մի քանի բաժիններում նկարագրվում է, թե ինչպես է ՏՏԿԱՀ 2019-ի տվյալների հիման վրա հաշվարկվում տնային տնտեսությունների համախառն սպառումը՝ սպառման ագրեգացված ցուցանիշը: Ներկայացվում է նաև, թե ինչ ճշգրտումներ են կատարվել տեղային և սեզոնային գների, ինչպես նաև տնային տնտեսությունների կազմի տարբերությունները հաշվի առնելու համար՝ ժամանակի, տարածության և տնային տնտեսության կազմի տեսանկյունից համադրելի բարեկեցության գնահատման ցուցանիշ սահմանելու նպատակով:



### 1.1 Պարենային սպառում

ՏՏԿԱՀ-ում տնային տնտեսության անդամների կողմից սննդամթերքի սպառումն արձանագրվում է օրագրի միջոցով: Օրագիրն առաջին հարցազրույցի օրը տրվում է տնային տնտեսությանը՝ դրա ամենօրյա լրացմանը վերաբերող ցուցումների հետ միասին:

Մինչև 2018 թվականը օրագրի վարման տևողությունը 30 օր էր, սակայն 2019 թվականից այն կրճատվեց՝ դառնալով 14 օր: Օրագրում լրացվել են տեղեկություններ միայն տնային տնտեսության անդամների կողմից տանն օգտագործված սննդամթերքի մասին: Տնային տնտեսության կողմից սննդամթերքի արտադրության համար որպես միջանկյալ մթերք օգտագործվող, ինչպես նաև ծեսերի նպատակով կամ արարողությունների ընթացքում սպառվող սննդամթերքը օրագրում չի հաշվառվել: Տնային տնտեսությունները գրանցել են տանը սպառված սնունդը, որը գնվել է շուկայից, արտադրվել է սեփական միջոցներով, ստացվել է որպես բնեղենով վարձատրություն կամ ստավել է անվճար: Օրագրում տեղեկություններ են լրացվել նաև տնից դուրս, օրինակ՝ ռեստորաններում, սրճարաններում և հանրային սննդի այլ վայրերում սպառված սննդի մասին: Աշակերտներին և ուսանողներին ընդմիջման ճաշի համար տրված գումարները նույնպես լրացվել են օրագրում:

Տնային տնտեսության կողմից սպառված յուրաքանչյուր սննդամթերքի համար սպառման արժեքը հաշվարկվել է՝ սպառված քանակը բազմապատկելով միավոր արժեքով: Միավոր արժեքները հաշվարկվել են սննդամթերքի գնումների վերաբերյալ բաժնում լրացված տվյալների հիման վրա: 14 օրվա ընթացքում չգնված, բայց սպառված սննդամթերքի մասով բացակայող միավոր արժեքները հաշվարկվել են՝ հիմնվելով այլ տնային տնտեսություններից ստացված տվյալների վրա: Բացակայող միավոր արժեքները փոխարինվել են տվյալ սննդամթերքի՝ նույն մարզի նույն քաղաքային կամ գյուղական բնակավայրում 2019 թվականի նույն եռամսյակում հարցված տնային տնտեսությունների հաղորդած տվյալների հիման վրա հաշվարկվող մեղիան միավոր արժեքով<sup>1</sup>:

Եթե այս առաջին վարժության արդյունքում չի հաջողվել ստանալ տվյալ սննդամթերքի միավոր արժեքը, փոխարենը վերցվել է նույն մարզում նույն եռամսյակում հարցված տնային տնտեսությունների հաղորդած տվյալների հիման վրա հաշվարկվող մեղիան միավոր արժեքը: Եթե այս երկրորդ վարժության արդյունքում նույնպես չի հաջողվել ստանալ տվյալ սննդամթերքի միավոր արժեքը, փոխարենը վերցվել է նույն քաղաքային կամ գյուղական բնակավայրում նույն եռամսյակում հարցված տնային տնտեսությունների հաղորդած տվյալների հիման վրա հաշվարկվող մեղիան միավոր արժեքը: Եթե սա նույնպես արդյունք չի տվել, հաջորդիվ որպես հիմք ընդունվել են նույն եռամսյակում հարցված տնային տնտեսությունները: Ի վերջո, եթե տվյալ սննդամթերքի միավոր արժեքը ստանալ չի հաջողվել, որպես հիմք վերցվել է հանրապետական միջին գինը: Եթե հետազոտության ընթացքում հարցված տնային տնտեսությունը որևէ սննդամթերք ընդհանրապես չի գնել, օգտագործվել են ԱՐՄՄՍՍՍ-ի կողմից իրականացված գների հետազոտության տվյալները:

2019-ին 63 պարենային ապրանքների գինը վերցվել է այդ հետազոտություններից: Հետազոտության 14 օրվա ընթացքում սննդի ընդհանուր սպառումը ստացվել է այդ ժամանակահատվածում սպառված բոլոր պարենային ապրանքների արժեքի պարզ գումարմամբ:

<sup>1</sup> Մեղիան գները նախընտրելի են միջինացված գներից, քանի որ հիմնական միտումները գնահատելու տեսանկյունից ավելի կայուն են, երբ խոսքը գնում է բաշխման շեղումների և հնարավոր ծայրահեղ արժեքների մասին: Այդուհանդերձ, զգայունության ստուգման նպատակով նույն վարժությունը կատարվել է՝ օգտագործելով միջինացված գները:

**Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը**

Չնայած տնային տնտեսություններից պահանջվել է օրագիրը լրացնել 14-օրյա ժամանակահատվածի բոլոր օրերի համար, որոշ տնային տնտեսություններ օրագիրը ոչ բոլոր օրերի համար են լրացրել: Ընդհանուր ընտրանքից օրագրի ամբողջական տվյալներ տրամադրել է 4 760 տնային տնտեսություն (ընտրանքի 92.2%-ը), մինչդեռ 405 տնային տնտեսության դեպքում (ընտրանքի 7.8%-ը) բացակայել են առնվազն մեկ օրվա համար լրացված տվյալները:

14 օրից պակաս կտրվածքով տվյալներ ունենալը խնդիր է առաջացրել սննդամթերքի ամսական ծախսերը հաշվարկելիս՝ բացակայող տվյալներով օրերի երկու այլընտրանքային մեկնաբանության պատճառով: Մասնավորապես, տվյալների բացակայությունը կարող է հետևանք լինել այն բանի, որ տնային տնտեսությունն այդ օրերին ոչինչ չի սպառել, կամ՝ մոռացել է լրացնել օրագիրը: ԱՐՄՍՍՍՏ-ի հետ խորհրդակցելուց հետո որոշվել է, որ ավելի խելամիտ է ենթադրել, որ բացակայող տվյալներով օրերը օրագրում գրառումներ չկատարելու, այլ ոչ թե զրոյական սպառման արդյունք են: Հետևաբար, սննդամթերքի ընդհանուր ամսական սպառումը հաշվարկելու համար նախ սննդի ընդհանուր սպառումը բաժանվել է օրագրի լրացման օրերի քանակի վրա՝ ամենօրյա սպառումը ստանալու համար, այնուհետև ստացված թիվը բազմապատկվել է 30.4-ով (մեկ ամսվա օրերի միջին քանակով)՝ տնային տնտեսության սննդի ամսական սպառումը ստանալու համար: Պարենային սպառման միջին արժեքը (մեդիան միավոր արժեքներով հաշվարկված) ըստ սննդամթերքի դասերի ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Պարենային սպառման միջին արժեքը (2019թ.)**

<b>Սպառման ագրեգատ</b>	<b>ՀՀ դրամ</b>
Հաց և հացամթերք	17 864
Միս	15 908
Ձուկ	1 563
Կաթ, պանիր և ձու	11 710
Բուսական յուղ և ճարպեր	4 356
Մրգեր	4 226
Բանջարեղեն	13 515
Շաքար, ջեմ, մեղր, շոկոլադ և քաղցրեղեն	5 983
Այլ պարենային ապրանքներ	1 567
Կոֆե, թեյ և կակաո	2 662
Ոչ ակտիվային խմիչքներ	810
Սննդամթերքի սպառում՝ բացառությամբ ակտիվի	80 163
Տնից դուրս սպառված սննդամթերք	3 773
Ընդամենը սննդամթերքի սպառում	83 936

**Աղբյուր.** *SSYUՀ 2019*

**Նշում.** *Սպառումը ներկայացված է մեդիան միավոր արժեքներով: Միջինացված արժեքները կշռված են ըստ բնակչության թվաքանակի:*

## 1.2 Ոչ պարենային սպառում

ՏՏԿԱՀ 2019-ում փոփոխություններ եղել են նաև ոչ պարենային սպառման մոդուլներում: Մինչև 2018 թվականը տնային տնտեսությունների վարած օրագրում լրացվում էին տվյալներ կոմունալ ծառայությունների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազամատակարարման, ջրամատակարարման, ինչպես նաև առողջապահության և կրթության ծախսերի վերաբերյալ: Մակայն 2019 թվականին այդ ծախսատեսակները օրագրում չներառելու հստակ ցուցում է տրվել, քանի որ համապատասխան տվյալները հավաքվում էին հարցաթերթի միջոցով:

Որոշակի ոչ պարենային ապրանքներ սպառման ագրեգատում չեն ներառվում, քանի որ դրանք ընդհանուր առմամբ բարեկեցության ավելի բարձր մակարդակի ցուցիչ չեն: Մասնավորապես, հարկերն ու տուրքերը ոչ պարենային սպառման ագրեգատում ներառված չեն: Տնային տնտեսության կողմից տրված նվերները, ուղարկված դրամական փոխանցումները և բարեգործական նվիրատվությունները նույնպես չեն ներառվում՝ կրկնակի հաշվարկից խուսափելու համար: Հանգստի և հանրային բարիքների սպառումը նպաստում է տնային տնտեսության բարեկեցության մակարդակի բարձրացմանը, բայց սովորաբար սպառման ագրեգատի մեջ չի ընդգրկվում՝ դրանց գնահատման դժվարության պատճառով: Տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումն ու տեխնիկական սպասարկումը սպառման ագրեգատում ներառվում են, սակայն տրանսպորտային միջոցների գնումը՝ ոչ, քանի որ դա միանվագ ծախս է:

Չեն ներառվում են նաև սակավադեպ ծախսերը, ինչպիսիք են թաղումները, հարսանիքները, արարողությունները կամ այլ ծիսական միջոցառումները: Հարցաթերթով նախատեսված է, որ ծախսերը կարող են ներկայացվել 4 արժույթով՝ ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի, ԱՄՆ դոլար և եվրո: Նախքան հանրագումարի բերելը բոլոր արժույթները փոխարկվում են հայկական ՀՀ դրամի: Ոչ պարենային սպառումը ներառում է գնված և նվեր ստացած ապրանքները: Եթե որևէ ապրանք որպես նվեր է ստացվել, տնային տնտեսությանն առաջարկվում է գնահատել դրա արժեքը:

### 1.2.1 Օրագրում գրանցվող ոչ պարենային սպառումը

Օրագրում գրանցվում է հետևյալ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների սպառումը<sup>1</sup>.

- 02 Ալկոհոլ, ծխախոտ և թմրանյութեր
- 03 Հագուստ և կոշիկեր
- 05 Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա
- 07 Տրանսպորտ<sup>2</sup>
- 09 Հանգիստ և մշակույթ
- 11 Հյուրանոցներ և ռեստորաններ
- 12 Տարբեր ապրանքներ և ծառայություններ

<sup>1</sup> Թվերը ցույց են տալիս «Անհատական սպառման դասակարգում ըստ նպատակի» (COICOP) երկնիշ դասերը:

<sup>2</sup> Ներառում է միայն անձնական տրանսպորտային միջոցների շահագործման և տրանսպորտային ծառայությունների ծախսերը:

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Ոչ պարենային ապրանքների մասով գրանցվել է միայն սպառման ընդհանուր արժեքը, այլ ոչ թե սպառման քանակը<sup>1</sup>: Ամսական ոչ պարենային սպառումը հաշվարկվել է նույն կերպ, ինչ ամսական պարենային սպառումը, մասնավորապես՝ ընդհանուր սպառումը բաժանելով օրագրի լրացման օրերի քանակի վրա և բազմապատկելով 30.4-ով (մեկ ամսվա օրերի միջին քանակով):

### 1.2.2 Օրագրային և ոչ օրագրային մոդուլներում գրանցված ոչ պարենային սպառումը

Ապրանքների և ծառայությունների հետևյալ դասերի վերաբերյալ տվյալները ստացվել են SSԿԱՀ 2019-ի ինչպես օրագրային, այնպես էլ ոչ օրագրային մոդուլներից:

#### 1.2.2.1 04 Բնակության պայմաններ

Կոմունալ ծառայությունների, մասնավորապես էլեկտրաէներգիայի և գազամատակարարման ծախսերը հաշվառվել են բնակության պայմանների վերաբերյալ ոչ օրագրային մոդուլում, իսկ վերանորոգման և սպասարկման ծախսերը՝ համապատասխան օրագրային մոդուլում: Կոմունալ ծառայությունների ծախսերը օրագրում գրանցված լինելու դեպքում հաշվի չեն առնվել՝ համարելով, որ սխալ լրացման արդյունք են:

#### 1.2.2.2 08 Կապի ծառայություններ

Կապի ծառայությունների մասով ծախսերի մասին տվյալների հիմնական աղբյուրը եղել է օրագիրը: Այդուհանդերձ, հարցման մասնակից 2 962 տնային տնտեսություն (ընտրանքի 57%-ը) կապի ծառայությունների մասով ծախսերի վերաբերյալ տվյալները օրագրում չեն լրացրել: Այդ տնային տնտեսությունների համար օգտագործվել են նշված ծախսերի վերաբերյալ ոչ օրագրային մոդուլից վերցված տվյալները: Ոչ օրագրային մոդուլում առկա է հարցադրում առ այն, թե վերջին ամսվա ընթացքում տնային տնտեսությունն ինչ գումար է վճարել ֆիքսված հեռախոսակապի, ինտերնետի և կաբելային հեռուստատեսության բաժանորդագրության համար:

#### 1.2.2.3 Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ

Ոչ պարենային սպառումը ներառում է տարվա ընթացքում երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտները: Երկարաժամկետ օգտագործման ապրանքները ակտիվներ են, որոնք ձեռք են բերվել տվյալ տարում, սակայն սպառվում են մի քանի տարվա ընթացքում: Երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտների տեսքով սպառումը գնահատելիս պետք է հաշվի առնել միայն տվյալ տարվա ընթացքում «սպառված» ակտիվի արժեքը: Սովորաբար, երկարաժամկետ օգտագործման ապրանքների սպառողական արժեքը գնահատվում է երեք տվյալի հիման վրա՝ գնման գին, ընթացիկ շուկայական արժեք և գնման տարի: Սա թույլ է տալիս գնահատել ակտիվի տարեկան մաշվածքը: Ցավոք, SSԿԱՀ-ով գնման տարվա կամ ընթացիկ շուկայական արժեքի վերաբերյալ տվյալներ չեն հավաքվում: Հայտնի է միայն սկզբնական գնման գինը:

<sup>1</sup> Ալկոհոլի սպառումը ներառված է օրագրի՝ սննդի սպառմանը վերաբերող մոդուլում, ուստի գնահատվում է այնպես, ինչպես սննդամթերքի սպառումը:

Երկարաժամկետ օգտագործման ապրանքների սպառողական արժեքը գնահատելու համար անհրաժեշտ տվյալների բացակայության պարագայում յուրաքանչյուր ապրանքի համար որոշվում է օգտագործման առավելագույն ժամկետը՝ այդ ապրանքից ստացված օգուտները գնահատելու համար: Այնուհետև սպառողական արժեքը հաշվարկվում է ըստ գնման գնի և օգտագործման առավելագույն ժամկետի՝ անկախ գնման տարեթիվից, ենթադրելով, որ ապրանքը ենթարկվել է գծային մաշվածքի<sup>1</sup>: Եթե տարվա ընթացքում գնված երկարաժամկետ օգտագործման ապրանքը, որի վերաբերյալ նշում է կատարվել ոչ օրագրային մոդուլում, գրանցվել է նաև օրագրում, այդ գրանցումը հաշվի չի առնվում: Եթե օրագրում գրանցվել է երկարաժամկետ օգտագործման ապրանքի գնում, որը ոչ օրագրային մոդուլում նշված չէ, այն ներառվել է երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտների մեջ:

### 1.2.3 Ոչ օրագրային մոդուլներում գրանցված ոչ պարենային սպառումը

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ առողջապահության և կրթության ոլորտի ծախսերը գրանցվում էին օրագրում, 2019 թվականին դրանք գրանցվել են ոչ օրագրային մոդուլներում:

#### 1.2.3.1 06 Առողջապահություն

Առողջապահական ծախսերը ներառում են տնային տնտեսության կողմից դեղամիջոցների, բժշկական պրոցեդուրաների և հիվանդանոցային ծառայությունների համար կանխիկով և բնեղենով կատարված վճարումները: Հարցաթերթով տնային տնտեսություններին հարցեր են առաջադրվում դեղամիջոցների մասով ամսական և հիվանդանոցային ծառայությունների մասով տարեկան ծախսերի վերաբերյալ: Բուժօգնության ծախսերի մասով տնային տնտեսությունները հայտնում են, թե վերջին 30 օրվա ընթացքում քանի անգամ են բուժհաստատություն այցելել և վերջին այցի ընթացքում ինչ ծախսեր են կատարել: Ամսվա ընթացքում բուժօգնության ծախսերը հաշվարկվում են վերջին այցի ծախսերը բազմապատկելով վերջին 30 օրվա ընթացքում կատարված այցելությունների քանակով՝ ենթադրելով, որ յուրաքանչյուր այց հավասարապես ծախսատար է:

#### 1.2.3.2 10 Կրթություն

Կրթության ծախսերը ներառում են նախադպրոցական և դպրոցական կրթության համար կատարվող ամսական ծախսերը: Նախադպրոցական կրթության ծախսեր ասելով նկատի է առնվել երեխաների մանկապարտեզ հաճախելու հետ կապված ծախսերը: Ըստ վերջին միջազգային ուղեցույցների, երեխաների խնամքի այն ծառայությունները, որոնք կրթական ծրագրեր չեն իրականացնում, նախադպրոցական կրթության ծախսերի մեջ չեն ներառվում (*Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտ, 2018թ., էջ 156*): Դպրոցական կրթության ծախսերը ներառում են մասնավոր դասերի համար վճարները, ուսման վարձը և անհրաժեշտ այլ վճարները, ինչպես նաև ծնողական կոմիտեների գործունեության հետ կապված ծախսերը: ՏՏԿԱՀ-ում դպրոցական համազգեստի, դասագրքերի, այլ նյութերի, ուսելիքի, տրանսպորտի, կացարանի և այլնի հետ կապված ծախսերը կրթության ծախսերի մեջ չեն ներառվել՝ օրագրում գրանցված սպառման կրկնակի հաշվարկից խուսափելու համար:

<sup>1</sup> Երկարաժամկետ օգտագործման ապրանքների կյանքի տևողությունը ստացվում է ԱՐՄՍՍՍՍ-ից:

**1.2.4 Վարձավճարներ**

Բարեկեցության գնահատման նպատակով սպառման ագրեգատի մեջ վարձավճարների ներառումը միանշանակ չէ: Բնակարանների և բնակավայրերի համադրելի տեսակներում ապրող վարձակալների և տանտերերի բարեկեցության մակարդակի համադրելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է կամ հաշվի չառնել վարձակալության արժեքը, կամ գնահատել, թե տանտերն ինչ օգուտներ է ստացել սեփական բնակարանն ունենալու արդյունքում (*Վիճակագրության զարգացման Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի աշխատանքային խումբ, 2019թ.*): Բնակության պայմանների արժեքի գնահատման ստանդարտ ընթացակարգը հեղոնիկ ռեգրեսիան է՝ հասկանալու համար կապը վարձավճարների և բնակարանի այնպիսի հատկանիշների միջև, ինչպիսիք են տան տարիքը և չափը, սենյակների քանակը, ենթակառուցվածքային ծառայությունների հասանելիությունը, հարևանության բնութագրերը և այլն: Հեղոնիկ ռեգրեսիայի գործակիցներն այնուհետև օգտագործվում են բնակարանի սեփականատեր տնային տնտեսությունների ստացած օգուտները հաշվարկելու նպատակով: Այս մոտեցումը կիրառելու համար, սակայն, պետք է առկա լինի վարձակալության զարգացած շուկա և բնակչության բոլոր խմբերի մասով վարձակալության վերաբերյալ տվյալների համաչափ բաշխում (*Վիճակագրության զարգացման Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի աշխատանքային խումբ, 2019թ.*): Բնակության պայմանների գնահատման այս մեթոդը խնդրահարույց է այն վայրերում, որտեղ շատ քիչ տնային տնտեսություններ են վարձակալված բնակարաններում բնակվում և շուկայական գներով վարձ վճարում: ՏՏԿԱՀ 2019-ի ընտրանքի ընդամենը 5.5%-ն է (284 տնային տնտեսություն) տուն կամ բնակարան վարձել: Ըստ այդմ, բնակության պայմանների արժեքը սպառման ագրեգատում չի ներառվել:

**1.2.5 Համախառն ոչ պարենային սպառում**

Ոչ պարենային սպառման միջին արժեքն ըստ ոչ պարենային ապրանքների դասերի ներկայացված է Աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Ոչ պարենային սպառման միջին արժեքը**

Սպառման ագրեգատ	ՀՀ դրամ
Երկարաժամկետ օգտագործման ապրանքներից ստացված օգուտներ	26 250
02 Ալկոհոլ, ծխախոտ և թմրանյութեր	7 172
03 Հագուստ և կոշիկեր	7 121
04 Բնակարանային պայմաններ	24 156
05 Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	4 699
06 Առողջապահություն	22 982
07 Տրանսպորտ	9 361
08 Կապ	5 577
09 Հանգիստ և մշակույթ	956
10 Կրթություն	4 962
11 Հյուրանոցներ և ռեստորաններ*	...
12 Տարբեր ապրանքներ և ծառայություններ	6 477
Ընդամենը ոչ պարենային ծախսեր	119 714

**Նշում.** ՏՏԿԱՀ 2019-ում բացակայում են հյուրանոցների և ռեստորանների վրա ծախսերի վերաբերյալ տվյալները: Միջինացված արժեքները կշռված են ըստ բնակչության թվաքանակի:

## **Գլուխ 2. Ճշգրտումներ**

Տարբեր տնային տնտեսությունների ցուցանիշները համադրելի դարձնելու համար անվանական սպառման ագրեգատի ցուցանիշը ճշգրտվում է ըստ գների տեղային և սեզոնային տարբերությունների, ինչպես նաև ըստ տնային տնտեսությունների կազմի տարբերությունների:

### **2.1 Գների տեղային և սեզոնային տարբերություններով պայմանավորված ճշգրտում**

Սպառման սեզոնային տատանումները հաշվի առնելու համար ՏՏԿԱՀ-ն իրականացվում է ամբողջ օրացուցային տարվա ընթացքում: Հետևաբար, տարվա ընթացքում ավելի ուշ հարցված տնային տնտեսությունները կարող են այլ գների մասին հայտնել, քան ավելի շուտ հարցված տնային տնտեսությունները: Բացի այդ, Հայաստանի մի մասի տնային տնտեսությունները կարող են նույն ապրանքի համար այլ գին վճարել՝ համեմատած երկրի այլ մասի տնային տնտեսությունների հետ: Գների տեղային տարբերակվածությունը հատկապես բարձր է այն երկրներում, որտեղ շուկաները հաղորդակցության կամ տրանսպորտային անբավարար ենթակառուցվածքի պատճառով լավ ինտեգրված չեն: Տնային տնտեսությունների միջև սպառման ցուցանիշների համեմատության արդյունքները հավաստի լինելու համար անհրաժեշտ է ճշգրտել գների նման տարբերությունները:

Պարենային ինդեքսը՝ տարբերակված ըստ եռամսյակների, մարզերի և քաղաքային/ գյուղական բնակավայրերի, հաշվարկվել է սննդամթերքի ծախսերի վերաբերյալ տվյալների միավոր արժեքների օգտագործմամբ: Մարզի, քաղաքային/ գյուղական բնակավայրի և հարցազրույցի անցկացման եռամսյակի չափանիշով սահմանված պարենային ինդեքսը պարզապես միջին պարենային զամբյուղի արժեքի (որը կշռվում է տվյալ չափանիշով տարբերակված՝ սննամթերքի ընդհանուր ծախսերի մեջ յուրաքանչյուր սննդատեսակի մասնաբաժնով) հարաբերակցությունն է 2019 թվականին նույն զամբյուղի միջին հանրապետական գնին: Ոչ պարենային սպառման համար գնի ճշգրտումը կատարվել է ԱՐՄՍՍՍՍ-ից ստացված եռամսյակային ՄԳԻ-ի օգտագործմամբ<sup>1</sup>:

Ոչ պարենային ծախսերն ըստ տեղային տարբերությունների չեն ճշգրտվում՝ այդ չափանիշով տարբերակված միավոր արժեքների կամ գների բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, այս բացթողումը թերևս որևէ հետևանք չի թողնում Հայաստանի նման երկրում, որտեղ շուկաները լավ ինտեգրված են: Պարենային և ոչ պարենային սպառման՝ տեղային և սեզոնային տարբերություններով պայմանավորված ճշգրտման գործոնները ներկայացված են Աղյուսակ 3-ում և 4-ում:

<sup>1</sup> Ոչ պարենային սպառման՝ տեղային տարբերություններով պայմանավորված գների ինդեքսը չի կարող սահմանվել այդ չափանիշով տարբերակված տվյալների բացակայության պատճառով: Պարենային սպառման՝ տեղային տարբերություններով պայմանավորված ճշգրտման գործոնների վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ Ա1-ում:

**Աղյուսակ 3. Պարենային սպառման տեղային տարբերություններով պայմանավորված ճշգրտման գործոնները, 2019թ.**

Մարզ	Ե1		Ե2		Ե3		Ե4	
	Քաղա- քային	Գյուղա- կան	Քաղա- քային	Գյուղա- կան	Քաղա- քային	Գյուղա- կան	Քաղա- քային	Գյուղա- կան
ք. Երևան	1.124		1.088		0.983		1.000	
Արագածոտն	1.109	0.973	0.998	1.017	0.949	0.937	0.974	0.993
Արարատ	1.032	1.086	1.071	1.015	0.993	0.944	0.986	0.927
Արմավիր	0.955	0.919	1.010	0.982	0.998	0.905	0.994	1.027
Գեղարքունիք	0.943	1.098	0.980	0.983	0.888	0.901	0.962	0.948
Լոռի	1.018	0.938	0.967	0.962	0.905	0.904	0.926	0.946
Կոտայք	1.149	0.973	1.055	0.995	0.985	0.941	0.967	0.954
Շիրակ	1.045	1.052	1.022	0.976	0.925	0.850	0.944	0.901
Սյունիք	1.084	0.993	1.127	1.025	1.011	1.000	1.074	1.034
Վայոց Ձոր	1.117	1.144	1.074	1.057	1.001	0.954	1.095	0.979
Տավուշ	1.139	0.925	1.018	1.119	0.994	1.000	1.043	0.998

Աղբյուր. SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Աղյուսակ 4. Պարենային սպառման սեզոնային տարբերություններով պայմանավորված ճշգրտման գործոնները, 2019թ.**

Ե1	Ե2	Ե3	Ե4
0.991	0.999	1.002	1.007

Աղբյուր. ԱՐՄՍՍՍՍ

**2.2 Տնային տնտեսության չափը, կազմը և անդամների բացակա օրերի քանակը**

Ճշգրտումներ պետք է կատարվեն նաև հաշվի առնելով կարիքների տարբերությունները, որոնք բխում են տնային տնտեսությունների չափի և տարիքային կազմի տարբերություններից: Մեկ չափահաս անձին համարժեք սպառումը գնահատվում է տնային տնտեսությունների ընդհանուր սպառումը բաժանելով մեկ չափահաս անձին համարժեք անդամների թվի վրա (EA): Այստեղ 14 տարեկան կամ ավելի փոքր տարիքի երեխաների կշիռը 0.65 է, ինչը ցույց է տալիս մեծահասակի և երեխայի սպառման ծախսերի հարաբերակցությունը:

Կատարվում է նաև տնային տնտեսության մասշտաբից բխող տնտեսումները հաշվի առնող ճշգրտում: Սպառման առումով մասշտաբից բխող տնտեսումները արտացոլում են այն իրողությունը, որ բարեկեցության այս կամ այն մակարդակին հասնելու համար անհրաժեշտ սպառումը տնային տնտեսության չափի հետ գծային կապով չի աճում: Հանրային բարիքները սպառման լավագույն օրինակն են, որոնք ի ցույց են դնում մասշտաբից բխող տնտեսումները: Մեկ ննջասենյակով բնակարանում ամուսնական զույգը կարող է նույնչափ լավ տեղավորվել, որքան միայնակ անհատը: Կոմունալ ծառայությունների, օրինակ՝ էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման, ջրահեռացման և աղբահանության ծախսերը տնային տնտեսությունների անդամների քանակի ավելացման հետ նույն համամասնությամբ չեն աճում:



## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Տնային տնտեսությունների կազմը և մասշտաբից բխող տնտեսումները հաշվի առնող ճշգրտման համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$EA_i = (A_i + a C_i)^a,$$

որտեղ  $EA_i$ -ն  $i$  տնային տնտեսության մեկ չափահաս անձին համարժեք անդամների թիվն է,  $A_i$ -ն տնային տնտեսության անդամների թիվն է,  $C_i$ -ն 14 տարեկան կամ ավելի փոքր տարիքի երեխաների թիվն է,  $a$ -ն մեծահասակի և երեխայի սպառման ծախսերի հարաբերակցությունն է, իսկ  $q$ -ն մասշտաբից բխող տնտեսումները հաշվի առնող ցուցանիշն է: Հայաստանում նախորդ տարիների փորձի ուսումնասիրության հիման վրա ընդունվել են հետևյալ արժեքները՝  $a = 0.65$ , իսկ  $q = 0.87$ :

Ավելին, հետազոտության ժամանակահատվածում տնային տնտեսության մեկ չափահաս անձին համարժեք անդամների թիվը որոշելիս հաշվի է առնվել անդամների՝ տնից բացակայելու օրերի քանակը: Օրինակ, եթե տնային տնտեսության չափահաս անդամը տանը ներկա է գտնվել հարցման ժամանակահատվածի օրերի ընդամենը կեսի ընթացքում, նա հաշվարկվում է որպես տնային տնտեսության կես անդամ: Սրա հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ այս ճշգրտումը չկատարելը կհանգեցնի մեկ չափահաս անձին համարժեք սպառման թերազնահատմանը, քանի որ տնային տնտեսության անդամների թիվը հարցման ժամանակահատվածի որոշակի մասի ընթացքում ավելի փոքր է եղել: Տնային տնտեսության չափահաս և անչափահաս անդամների բացակա օրերի մասով ճշգրտում կատարելուց հետո մեկ չափահաս անձին համարժեք անդամների թիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Ճշգրտված } EA_i = (\text{Ճշգրտված } A_i + a * \text{Ճշգրտված } C_i)^a$$

### Գլուխ 3. Աղքատության գծերի հաշվարկը

Աղքատության գիծը սահմանում է ծախսերի այն մակարդակը, որը տնային տնտեսությանն անհրաժեշտ է տվյալ հասարակությունում կենսամակարդակի նվազագույն մակարդակն ապահովելու համար: Աղքատության գիծը սահմանելու բազմաթիվ եղանակներ կան: Այս վարժությունում կիրառվում է «հիմնական կարիքների արժեքի» (ՀԿԱ) մեթոդը: Ինչպես արդեն վերը նշվել է, ՀԿԱ մեթոդով նախ գնահատվում է էներգիայի նվազագույն օրական պահանջը բավարարելու համար անհրաժեշտ սնունդ ձեռք բերելու ծախսը: Այնուհետև պարենային աղքատության գծին ավելացվում է այլ հիմնական ապրանքների և ծառայությունների արժեքը՝ ընդհանուր ստորին, վերին և միջին աղքատության գծերը գնահատելու համար:

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը կիրառում է բացարձակ աղքատության գիծը, ինչը նշանակում է, որ այդ գիծը ժամանակի ընթացքում մնում է անփոփոխ և ճշգրտվում է միայն ըստ տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունների: Աղքատության ազգային գծի նախորդ հաշվարկը կատարվել է ՏՏԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա: Աղքատության գծերի պարբերական վերանայումը կարևոր նշանակություն ունի կենսամակարդակի նվազագույն մակարդակի առումով փոփոխվող հանրային փոխհամաձայնությունը, ինչպես նաև դրա հիմքում ընկած՝ բնակչության սպառման օրինաչափությունների և ժողովրդագրական կազմի մասին տվյալները արտացոլելու տեսանկյունից:

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Հաջորդող բաժինները նկարագրում են պարենային աղքատության գծի սահմանման մեթոդաբանությունը և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների մասնաբաժնի հաշվարկը:

### 3.1 Պարենային աղքատության գիծ

Պարենային աղքատության գիծը սննդի բավարար սպառում ապահովող անհրաժեշտ նվազագույն ծախսն է: Պարենային աղքատության գիծը գնահատելու համար անհրաժեշտ է երկու տեսակի տվյալ՝ էներգիայի օրական պահանջը և մեկ կալորիայի արժեքը:

*Պարենային աղքատության գիծը (ՊԱԳ) = Օրական մեկ շնչի հաշվով կալորիականության պահանջ \* Մեկ կալորիայի արժեք*

Հաջորդող ենթաբաժիններում մանրամասն նկարագրվում են էներգիայի օրական պահանջի և մեկ կալորիայի արժեքի հաշվարկման քայլերը:

#### 3.1.1 Էներգիայի պահանջ

Պարենային աղքատության գիծը հաշվարկելու առաջին քայլը կալորիականության օրական պահանջի հաշվարկումն է, որը կախված է բնակչության կառուցվածքից, մարմնի միջին քաշից՝ ըստ տարիքի և սեռի, բնակչության ֆիզիկական ակտիվության մակարդակից (ՖԱՄ) և կալորիականության հատուկ կարիքներ ունեցող անձանց (օրինակ՝ հղի և կրծքով կերակրող կանանց) թվից:

- *Հայաստանի բնակչության կառուցվածքը*. ՏՏԿԱՀ 2019-ը Հայաստանում բնակչության ժողովրդագրական բաշխման մասին տվյալների հիմնական աղբյուրն է (Աղյուսակ Ա8): Արդյունքների կայունության ստուգումը կատարվել է՝ օգտագործելով ԱՐՄՍՍՍ-ի և Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի կողմից կատարված բնակչության կանխատեսումները:
- *Մարմնի քաշը և էներգիայի պահանջները՝ ըստ տարիքի և սեռի*. Մարդու էներգիայի պահանջի և մարմնի քաշի վերաբերյալ տվյալները վերցվել են ՊԳԿ/ԱՀԿ/ՄԱԿՀ համատեղ փորձագիտական խորհրդատվական զեկույցից (ԱՀԿ, ՊԳԿ, ՄԱԿՀ, 2004թ.): Չեկույցը թվարկում է մարմնի միջին քաշը և էներգիայի պահանջը մինչև մեկ տարեկան երեխաների և 1 տարեկան ու ավելի բարձր տարիքի անձանց համար: 18-69 տարեկանների մարմնի քաշի վերաբերյալ տվյալները վերցվել են Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից իրականացված՝ Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածության վերաբերյալ 2016-2017 թվականների տնային տնտեսությունների առողջության ազգային հետազոտությունից (Աղյուսակ Ա3 և Աղյուսակ Ա4): Արդյունքների կայունության ստուգումը կատարվել է՝ օգտագործելով մարմնի քաշի և էներգիայի պահանջի վերաբերյալ առկա հետազոտությունները (Ամենդոլա և Վեչի, 2011թ.):
- *Ֆիզիկական ակտիվության մակարդակ (ՖԱՄ)*. ՖԱՄ-ը էներգիայի օրական պահանջի հիմնական դետերմինանտն է: Նստակյաց կամ նվազ ակտիվ ապրելակերպ վարող մարդիկ կալորիականության ավելի ցածր պահանջ ունեն՝ համեմատած միջին կամ ակտիվ ապրելակերպ վարողների հետ: Զգայունության վերլուծության համար օգտագործվել են ցածր և բարձր ՖԱՄ-երը: Ցածր ՖԱՄ-ի դեպքում ենթադրվել է, որ քաղաքաբնակները

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

վարում են նվազ ակտիվ ապրելակերպ (ՖԱՄ=1.53), իսկ գյուղաբնակները՝ չափավոր ակտիվ ապրելակերպ (ՖԱՄ=1.76): Բարձր ՖԱՄ-ի դեպքում ենթադրվել է, որ քաղաքաբնակները և գյուղաբնակները վարում են համապատասխանաբար չափավոր ակտիվ (ՖԱՄ=1.76) և առավել ակտիվ (ՖԱՄ=2.25) ապրելակերպ (Աղյուսակ 5.1, ԱՀԿ, ՊԳԿ, ՄԱԿՀ, 2004թ.):

- *Ըստ քաղաքային/գյուղական բնակավայրերում բնակության բաշխում.* ՖԱՄ-ների կիրառման համար կարևոր է բնակչության տարբերակումը ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերում բնակության: Այս նպատակով օգտագործվել են ՏՏԿԱՀ 2019-ի տվյալները:
- *Հղի և կրծքով կերակրող կանայք.* Հղիության և կրծքով կերակրման ցուցանիշների մասով տվյալների հիմնական աղբյուրը ՏՏԿԱՀ 2019-ն է, իսկ արդյունքների կայունության ստուգումը կատարվել է Ժողովրդագրական և առողջապահական հետազոտությունների (ԺԱՀ) 2016 թվականի տվյալների հիման վրա (Աղյուսակ Ա5ա և Աղյուսակ Ա5բ): ՏՏԿԱՀ-ով արձանագրվում են միայն 12 և ավելի շաբաթական հղիության դեպքերը: Մա նշանակում է, որ հղիության առաջին եռամսյակում գտնվող կանանց թիվը տվյալների մեջ չի արտացոլվում: Հարցմամբ նաև ուղղակիորեն չի պարզվում, թե արդյոք նորածնի մայրը կրծքով կերակրում է երեխային: Սույն վերլուծության շրջանակներում ենթադրվել է, որ 1 տարեկանից փոքր բոլոր նորածինների մայրերը կրծքով կերակրում են երեխաներին: Եթե նորածնի տարիքը հնարավոր չէ որոշել՝ համապատասխան տվյալը լրացված չլինելու պատճառով, երեխան պատահականության սկզբունքով վերագրվել է բացառապես կրծքով կերակրման (0-6 ամիս) կամ մասամբ կրծքով կերակրման (7-11 ամիս) տարիքային խմբերից որևէ մեկին:

*Հղի կանանց համար էներգիայի լրացուցիչ պահանջը հետևյալն է. 85 կկալ/օր առաջին եռամսյակի, 285 կկալ/օր երկրորդ եռամսյակի և 475 կկալ/օր երրորդ եռամսյակի համար (ԱՀԿ, ՊԳԿ, ՄԱԿՀ, 2004թ.): Հետազոտությանը պտղի տարիքի վերաբերյալ տվյալներ չեն հավաքվում, ուստի վերցվել են միջին՝ երկրորդ և երրորդ եռամսյակի արժեքները: Ենթադրվել է նաև, որ մինչև 6 ամսական նորածինների մայրերը կերակրում են բացառապես կրծքով, ինչի լրացուցիչ էներգիայի պահանջը օրական 675 կկալ/օր է, իսկ 7-ից 11 ամսական նորածինների մայրերը կրծքով կերակրում են մասամբ, ինչի լրացուցիչ էներգիայի պահանջը 460 կկալ/օր է:*

Վերոնշյալ ելակետային տվյալների հիման վրա Հայաստանի բնակչության համար 2019 թվականին էներգիայի միջին պահանջը հաշվարկվել է հետևյալ կերպ՝ ցածր ՖԱՄ-ի դեպքում մեկ շնչի հաշվով օրական 2 307 կկալ, իսկ բարձր ՖԱՄ-ի դեպքում մեկ շնչի հաշվով օրական 2 682 կկալ:

2009 թվականին սահմանված աղքատության գծերը հիմնված էին մեկ շնչի հաշվով օրական 2 232 կկալ հաշվարկի վրա, ինչը հավասար է 2004 թվականին որպես հիմք ընդունված մակարդակին (Համաշխարհային բանկ, 2011թ.):

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Առցանց լրատվական աղբյուրները նշում են, որ Առողջապահության նախարարությունը էներգիայի օրական պահանջը հաշվարկել է 2 412 կկալ չափով<sup>1</sup>: Թեպետ այս տեղեկատվությունը պաշտոնապես չի հաստատվել, այն հաշվի է առնվել համեմատության նպատակով:

Վերջապես, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) Հայաստանի համար 2020 թվականին սննդային էներգիայի միջին պահանջը (ՄԷՄՊ) հաշվարկել է 2 428 կկալ չափով<sup>2</sup>:

Էներգիայի պահանջ (մեկ շնչի հաշվով օրական կկալ)	Աղբյուր
2 232	SSԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա հաշվարկներ
2 307	SSԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա ՀԲ-ի հաշվարկներ՝ ցածր ՖԱՄ-ի դեպքում
2 412	Առողջապահության նախարարություն
2 438	Սննդային էներգիայի միջին պահանջ (ՄԷՄՊ), ՊԳԿ 2020թ.
2 682	SSԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա ՀԲ-ի հաշվարկներ՝ բարձր ՖԱՄ-ի դեպքում

**3.1.2 Մեկ կալորիայի արժեքը**

Պարենային աղքատության գծի հաշվարկման երկրորդ քայլը մեկ կալորիայի արժեքի գնահատումն է: Յուրաքանչյուր սննդամթերքի մեկ միավորի (կիլոգրամ, լիտր կամ հատ) վերագրվել է կալորիականության որոշակի արժեք՝ ըստ ԱՐՄՍՍՍՍ -ի կողմից տրամադրված կալորիականության փոխարկման սանդղակի (ԱՐՄՍՍՍՍ, 2010թ.): Կալորիաները ճշգրտվել են ըստ սննդի ուտելի մասի: Սննդամթերքի սպառման արժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով մեդիան միավոր արժեքները: Ալկոհոլային խմիչքների օգտագործումը ներառվում է մեկ կալորիայի արժեքի հաշվարկի մեջ: Այս տվյալներն օգտագործելով՝ մեկ կալորիայի արժեքը հաշվարկվում է որպես յուրաքանչյուր սննդամթերքի մեկ միավորի արժեքի և կալորիանակության հարաբերակցություն:

SSԿԱՀ 2019-ով տվյալներ են հավաքվել 344 տարբեր սննդամթերքների և ալկոհոլային ու ոչ ալկոհոլային խմիչքների վերաբերյալ: Դրանց որոշ տեսակներ սպառում են միայն փոքր թվով տնային տնտեսություններ, ուստի մեկ կալորիայի արժեքի հաշվարկի մեջ դրանց ընդգրկումը կարող է հանգեցնել խտրական գնահատականների: Մեկ կալորիայի արժեքի հաշվարկման արդյունքների կայունությունը գնահատելու համար կատարվել է զգայունության վերլուծություն՝ հաշվարկներում սննդամթերքի միայն որոշակի ենթաբազմություն ներառելու եղանակով: Սննդամթերքի այն տեսակները, որոնց մասով ծախսերի կուտակային մասնաբաժինը Հայաստանում սննդամթերքի ընդհանուր ծախսերի մեջ փոքր է 3%-ից, 2%-ից և 1%-ից, հանվել են մեկ կալորիայի արժեքի հաշվարկից<sup>3</sup>:

<sup>1</sup> Աղբյուրը՝ <https://www.evnreport.com/raw-unfiltered/armenia-s-food-basket-reality-or-battle-for-survival#:~:text=The%20minimum%20food%20basket%20for,calories%20per%20person%20per%20day.>

<sup>2</sup> Աղբյուրը՝ <http://www.fao.org/economic/ess/ess-fs/ess-fadata/en/#.Xw2boygzbiU>: ՀԲ-ի կողմից SSԿԱՀ-ի տվյալների հիման վրա կատարված հաշվարկների և ՊԳԿ-ի կողմից հաշվարկված Սննդային էներգիայի նվազագույն պահանջի (ՄԷՆՊ) և Սննդային էներգիայի միջին պահանջի (ՄԷՄՊ) միջև առկա են որոշակի մեթոդաբանական տարբերություններ: ՊԳԿ-ի մեթոդաբանության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար տես՝ ՊԳԿ, 2020թ.:

<sup>3</sup> Սա ամբողջ ընտրանքի վրա հիմնված ծախսերի մասնաբաժինն է: Որոշ տնային տնտեսությունների դեպքում սննդամթերքի այս կամ այն տեսակը կարող է ավելի մեծ մասնաբաժին ունենալ սննդի ընդհանուր սպառման մեջ:

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Յուրաքանչյուր տնային տնտեսության համար մեկ կալորիայի արժեքը հաշվարկելու նպատակով գնահատվել է մեկ կալորիայի արժեքի միջին կշռված մեծությունը, որտեղ կշիռները որոշվել են ըստ տվյալ սննդամթերքի պարունակած կալորիաների մասնաբաժնի: Մաթեմատիկորեն,  $i$  տնային տնտեսության համար մեկ կալորիայի արժեքը հաշվարկվել է հետևյալ կերպ:

$$(Մեկ կալորիայի արժեք)_i = \sum_{f=1}^n \frac{(Միավորի արժեք)_f}{(Միավորի կալորիականություն)_f} S_{fi},$$

որտեղ  $S_{fi}$ -ն  $f$  սննդամթերքի տեսակից  $i$  տնային տնտեսության ստացած ընդհանուր կալորիաների մասնաբաժինն է:

Համեմատվող բնակչությունը մեկ կալորիայի արժեքի և պարենային աղքատության գծի հաշվարկման ևս մեկ կարևոր դետերմինանտ է: Համեմատվող բնակչությունը չի կարող լինել «չափազանց աղքատ» կամ «չափազանց հարուստ»: Այն պետք է լինի աղքատության գծին մոտ գտնվող տնային տնտեսությունների թվից, որպեսզի դրա պարենային զամբյուղը նման լինի համեմատաբար աղքատ բնակչության պարենային զամբյուղին: Նախկինում կատարված աշխատանքի և ձևավորված պրակտիկայի համաձայն՝ մեկ կալորիայի արժեքը և պարենային աղքատության գիծը հաշվարկելու համար որպես համեմատվող բնակչություն վերցվում են մեկ չափահաս անձին համարժեք սպառման ազդեցատի երկրորդ, երրորդ և չորրորդ դեցիլային խմբերին պատկանող տնային տնտեսությունները: Արդյունքների կայունության վերլուծությունն իրականացվում է՝ որպես համեմատվող խմբեր ընտրելով 1-3 և 2-3 դեցիլային խմբերը:

Զգայունության վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 5-ում: Երբ հաշվարկներից դուրս ենք թողնում սննդամթերքի այն տեսակները, որոնց մասով ծախսերի կուտակային մասնաբաժինը փոքր է 3%-ից, սննդամթերքի բոլոր տեսակների գրեթե 60%-ը (344-ից 209-ը), որոնք կազմում են բոլոր դիտարկումների ընդամենը 5,8%-ը, հաշվարկներից դուրս են մնում: Մեկ կալորիայի արժեքը կայուն է սննդամթերքի դուրս թողնված տեսակների նկատմամբ, որոնց մասով ծախսերի կուտակային մասնաբաժինը փոքր է 1%-ից կամ 2%-ից: Բոլոր դեպքերում մեկ կալորիայի արժեքը մեծանում է, երբ որպես համեմատվող բնակչություն 1-3 դեցիլային խմբերից անցնում ենք 2-3 և 2-4 դեցիլային խմբերին: Սա համընկնում է այն ակնկալիքի հետ, որ որքան բարեկեցիկ է տնային տնտեսությունը, այնքան դրա պարենային զամբյուղում շատ են կալորիաների ավելի թանկարժեք աղբյուրները: Մեկ կիլոկալորիայի նախընտրելի արժեքը կազմում է 0.3385 ՀՀ դրամ, ինչը ստացվում է հաշվարկից դուրս թողնելով այն ոչ կարևոր պարենային ապրանքները, որոնք միասին կազմում են սննդամթերքի ընդհանուր ծախսերի 3%-ից պակաս մասը, և որպես համեմատվող բնակչություն վերցնելով երկրորդ, երրորդ և չորրորդ դեցիլային խմբերը:

Պարենային աղքատության գիծը (ՊԱԳ) մեկ շնչի հաշվով ամսական 23 763 ՀՀ դրամ է, ինչը ստացվում է էներգիայի (կամ կալորիաների) օրական պահանջը բազմապատկելով մեկ կալորիայի արժեքով ( $= 2\,307 * 0.3386 * (365/12)$ )<sup>1</sup>:

<sup>1</sup> Բազմապատկման արդյունքը ճիշտ հավասար չէ 23,370-ի՝ կլորացման պատճառով:

**Աղյուսակ 5. Մեկ կալորիայի արժեքը**

Համեմատվող բնակչություն (մեկ չափահաս անձին համարժեք սպառման)	1%-ից	2%-ից	3%-ից
1-3 դեցիլային խմբեր	0.3 181	0.3 176	0.3 163
2-3 դեցիլային խմբեր	0.3 345	0.3 332	0.3 318
2-4 դեցիլային խմբեր	0.3 417	0.3 404	<b>0.3 386</b>
Հաշվարկում չներառված սննդամթերքի տեսակների քանակը (344-ից)	157	189	209
Հաշվարկում չներառված գրանցումների քանակը (185 822-ից)	3 523	7 561	10 712

**Աղբյուր.** SSYUՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**3.2 Աղքատության գծի ոչ պարենային բաղադրիչները. աղքատության ստորին և վերին գծեր**

Պարենային աղքատության գիծը գնահատելուց հետո ՀԿԱ մեթոդով սահմանվում են աղքատության գծերը՝ պարենային աղքատության գծին ավելացնելով ոչ պարենային հիմնական կարիքներով պայմանավորված սպառումը: Ի տարբերություն պարենային աղքատության գծի, որը հիմնված է էներգիայի պահանջի կենսաբանական կարիքի վրա, ոչ պարենային բաղադրիչը որոշելու համար առկա տեսաբանական նյութերն ավելի սուղ են: Ավելի հաճախ օգտագործվող մեթոդն առաջարկվում է Ռավալիոնի (1994թ.) և Ռավալիոնի և Բիդանիի (1994թ.) կողմից: Առավել խնայողական հաշվարկով ոչ պարենային սպառման մասնաբաժինը գնահատվում է այն տնային տնտեսությունների ոչ պարենային ապրանքների վրա կատարվող միջին ծախսերի չափով, որոնց **ընդհանուր ծախսերը** մոտավորապես հավասար են պարենային աղքատության գծին: Այս մասնաբաժինը պարենային աղքատության գծին ավելացնելով ստացվում է աղքատության ստորին գիծը (ԱՍԳ): Մաթեմատիկորեն ԱՍԳ-ն արտահայտվում է հետևյալ կերպ.

$$ԱՍԳ = ՊԱԳ + E[x_{ոչ\ պարենային} | x_{ընդհանուր} \cong \eta ԱԳ],$$

որտեղ  $x_{ոչ\ պարենային}$ -ը մեկ չափահաս անձին համարժեք ոչ պարենային սպառումն է, իսկ  $x_{ընդհանուր}$ -ը մեկ չափահաս անձին համարժեք ընդհանուր սպառումը:

Նվազ խնայողական հաշվարկով ոչ պարենային սպառման մասնաբաժնի գնահատման համար վերցվում են այն տնային տնտեսությունները, որոնց **պարենային սպառումը** մոտավորապես հավասար է պարենային աղքատության գծին, այսինքն՝ այն տնային տնտեսությունները, որոնք սննդի վրա կատարվող ծախսերով պարզապես բավարարում են կալորիականության օրական պահանջը<sup>1</sup>: Պարենային աղքատության գծին ոչ պարենային սպառման այս ավելի մեծ մասնաբաժին ավելացնելու միջոցով ստացված աղքատության գիծը հայտնի է որպես աղքատության վերին գիծ (ԱՎԳ):

$$ԱՎԳ = ՊԱԳ + E[x_{պարենային} | x_{պարենային} \cong \eta ԱԳ],$$

որտեղ  $x_{պարենային}$ -ը մեկ չափահաս անձին համարժեք պարենային սպառումն է:

<sup>1</sup> Սննդամթերքի սպառումը ներառում է ավրիոլը և տնից դուրս սպառվող սնունդը:

**Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը**

Վերոհիշյալ հավասարումներում ակնկալվող արժեքները գնահատելու համար կիրառվում է ոչ պարամետրիկ մեթոդ: ԱՄԳ-ի գնահատման համար հաշվարկվում է (մեկ չափահաս անձին համարժեք) **ոչ պարենային մեղիան ծախսը** այն տնային տնտեսությունների համար, որոնց **ընդհանուր ծախսերը** պարենային աղքատության գծից 5% հեռավորության սահմաններում են: Նմանապես, ԱՎԳ-ի գնահատման համար հաշվարկվում է (մեկ չափահաս անձին համարժեք) **պարենային մեղիան ծախսը** այն տնային տնտեսությունների համար, որոնց **պարենային ծախսերը** պարենային աղքատության գծից 5% հեռավորության սահմաններում են: Զգայունության վերլուծություն կատարվում է նաև պարենային աղքատության գծի շուրջ 10% և 15% միջակայքերի հաշվարկով: Փոխզիջումային տարբերակով դիտարկվում է նաև աղքատության երկու գծերի միջինը (աղքատության միջին գիծ, ԱՄԳ)՝ որպես աղքատության սահմանման այլընտրանքային շեմ (Հաֆթոն և Խանդկեր, 2009թ.):

Ստորև բերված Աղյուսակ 6-ում ներկայացված է աղքատության ստորին (ԱՄԳ), վերին (ԱՎԳ) և միջին (ԱՄԳ) գծերի մասով արդյունքների կայունության վերլուծությունը՝ պարենային աղքատության գծի շուրջ 5%, 10% և 15% միջակայքերի և սպառման դեցիլային խմբերի դիտարկմամբ: Վահանակ Ա-ում ներկայացված են սպառման 2-4 (նախընտրելի) դեցիլային խմբերի, իսկ Վահանակներ Բ-ում և Գ-ում՝ համապատասխանաբար սպառման 1-3 և 2-3 դեցիլային խմբերի համար վերլուծության արդյունքները: Հաշվարկի համար օգտագործվում է մեկ շնչի հաշվով օրական 2,307 կկալ էներգիայի պահանջը: Ինչպես տեսնում ենք, ընտրված դեցիլային խմբերում աղքատության գծերը կայուն են պարենային աղքատության գծի շուրջ սիմետրիկ միջակայքերի ընտրության նկատմամբ:

**Աղյուսակ 6. Միջակայքի ընտրության և դեցիլային խմբերի նկատմամբ աղքատության ստորին և վերին գծերի զգայունության վերլուծությունը**

**(մեկ չափահաս անձին համարժեք ամսական սպառում, ՀՀ դրամով, 2019թ.)**

<b>Վահանակ Ա. Սպառման 2-4 դեցիլային խմբեր</b>				
Միջակայք	Պարենային աղքատության գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ	Աղքատության միջին գիծ
+5%	23 763	35 054	53 043	44 048
+10%	23 763	34 459	53 363	43 911
+15%	23 763	35 054	53 363	44 208
<b>Վահանակ Բ. Սպառման 1-3 դեցիլային խմբեր</b>				
Միջակայք	Պարենային աղքատության գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ	Աղքատության միջին գիծ
+5%	22 199	31 581	51 186	41 383
+10%	22 199	32 389	51 570	41 980
+15%	22 199	32 115	50 913	41 514
<b>Վահանակ Գ. Սպառման 2-3 դեցիլային խմբեր</b>				
Միջակայք	Պարենային աղքատության գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ	Աղքատության միջին գիծ
+5%	23 288	33 893	52 888	43 391
+10%	23 288	33 644	52 730	43 187
+15%	23 288	33 893	52 807	43 350

**Աղբյուր.** SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Նշում.** Աղքատության բոլոր գծերը սահմանված են մեկ չափահաս անձին համարժեք ամսական սպառմամբ՝ ՀՀ դրամով:

### 3.3 Աղքատության գծերը և մակարդակները

Վերը նկարագրված ստանդարտ պրակտիկայի և ճիշտ պարամետրերի ընտրությունից հետո հաշվարկվել է 2019 թվականին Հայաստանում աղքատության գծերը և մակարդակները, որոնք ներկայացված են Աղյուսակ 7-ում: Ընտրված պարամետրերը հետևյալ են. սպառման դեցիլային խմբեր՝ 2-4, պարենային աղքատության գծի շուրջ միջակայք՝ 5%, էներգիայի պահանջ՝ մեկ շնչի հաշվով օրական 2 307 կկալ: Ըստ այդմ, 2019 թվականին Հայաստանում աղքատության ստորին մակարդակը 10.2% է, վերին մակարդակը՝ 43.8%, իսկ միջին մակարդակը՝ 26.4%:

Աղյուսակ 7. Հայաստանում աղքատության մակարդակները և գծերը, 2019թ.


	Գիծ	Մակարդակ
Պարենային աղքատություն	23 763	1.45%
Ստորին աղքատություն	35 054	10.19%
Վերին աղքատություն	53 043	43.79%
Միջին աղքատություն	44 048	26.43%

**Աղբյուր.** SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ


Թեպետ էներգիայի նախընտրելի օրական պահանջը 2,307 է, որը հաշվարկվել է SSԿԱՀ 2019-ի տվյալների հիման վրա՝ քաղաքային բնակավայրերում ցածր ակտիվության, իսկ գյուղական բնակավայրերում՝ չափավոր ակտիվ ապրելակերպի վարկածով, Գծապատկեր 2-ը ցույց է տալիս աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը էներգիայի օրական պահանջի տարբեր ցուցանիշների ընտրության նկատմամբ: Մասնավորապես, աղքատության գծերը և աղքատության մակարդակները էներգիայի օրական պահանջի փոփոխությանը զուգընթաց գծային կապով աճում են:

#### Գծապատկեր 2. Էներգիայի օրական պահանջի նկատմամբ աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը <sup>1</sup>

ա) Աղքատության գծեր



բ) Աղքատության մակարդակներ



**Աղբյուր.** SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

<sup>1</sup> Աղքատության գծերը և աղքատության մակարդակները ներկայացված են նաև Աղյուսակ Ա10-ում և Աղյուսակ Ա11-ում:



**Գլուխ 4. Աղքատության «նոր» և «հին» գծերի համեմատությունը**

Մինչև 2018 թվականը պարենային աղքատության գիծն ամեն տարի վերանայվել է՝ նախորդ տարվա գիծն ըստ պարենային ՍԳԻ-ի փոփոխության ճշգրտելով: Նմանապես, աղքատության ստորին և վերին մակարդակները վերանայվել են՝ մի կողմից պարենային աղքատության գծի, մյուս կողմից՝ ստորին և վերին աղքատության գծերի ոչ պարենային բաղադրիչների կշռված համակցությամբ<sup>1</sup>: Մասնավորապես, պարենային, ստորին և վերին աղքատության գծերը  $t + 1$  տարվա համար (սկսած 2010 թվականից) գնահատվել են հետևյալ կերպ:

$$\mathit{ՊՍԳ}_{t+1} = \mathit{ՊՍԳ}_t \times \mathit{պարենային ՍԳԻ}_{t+1}$$

$$\mathit{ԱՍԳ}_{t+1} = \mathit{ՊՍԳ}_{t+1} + (\mathit{ԱՍԳ}_t - \mathit{ՊՍԳ}_t) \times \mathit{ոչ պարենային ՍԳԻ}_{t+1}$$

$$\mathit{ԱՎԳ}_{t+1} = \mathit{ՊՍԳ}_{t+1} + (\mathit{ԱՎԳ}_t - \mathit{ՊՍԳ}_t) \times \mathit{ոչ պարենային ՍԳԻ}_{t+1}$$

Թեպետ վերանայումներն արտացոլում են ժամանակի ընթացքում գների փոփոխությունները, դրանք չեն ճշգրտում սպառողական զամբյուղի կազմը, որն անփոփոխ է մնացել 2009 թվականից: Առյուսակ 8-ում ներկայացված են 2009 և 2019 թվականների սպառողական զամբյուղների հիման վրա հաշվարկված աղքատության գծերը: Սպառողական նոր զամբյուղի հիման վրա հաշվարկված պարենային աղքատության գիծը շուրջ 6.1%-ով ցածր է հին զամբյուղի հիման վրա հաշվարկվածից, մինչդեռ աղքատության ստորին գիծը ցածր է մոտ 1.7 տոկոսով: Ի տարբերություն դրա, 2019 թվականի սպառողական զամբյուղի հիման վրա հաշվարկված աղքատության վերին գիծը 22,5% -ով բարձր է 2009 թվականի զամբյուղի հիման վրա հաշվարկվածից, որը ճշգրտվել է ըստ ՍԳԻ-ի՝ աղքատության գծի իրական արժեքն անփոփոխ պահելու նպատակով:

2019 թվականին հաշվարկված աղքատության վերին գծի զգալիորեն բարձր մակարդակը կարելի է բացատրել Էնգելի գործակիցով: Պարենային աղքատության գծի և աղքատության վերին գծի հարաբերակցությունը 2009 թվականին 56.5% էր, մինչդեռ 2019 թվականին այն կազմել է ընդամենը 44.8%: Սա նշանակում է, որ համեմատվող տնային տնտեսություններում ըստ աղքատության վերին գծի սննդամթերքի սպառման մասնաբաժինը 2019 թվականին 2009 թվականի համեմատ զգալիորեն ցածր է, ինչն իր հերթին բարձրացնող ազդեցություն է ունենում աղքատության վերին գծի վրա: Ի հակադրություն սրա, պարենային աղքատության գծի և աղքատության ստորին գծի հարաբերակցությունը 2009 թվականին 69.3% էր, իսկ 2019 թվականին՝ 67.8%, ինչը նշանակում է, որ համեմատվող տնային տնտեսություններում ըստ աղքատության ստորին գծի սննդամթերքի սպառման մասնաբաժինը դիտարկվող ժամանակահատվածում էապես չի փոխվել:

<sup>1</sup> 2009-2019թթ. պարենային և ոչ պարենային ապրանքների ՍԳԻ-ն ներկայացված է Առյուսակ Ա9-ում:

**Աղյուսակ 8. Հայաստանում աղքատության նախկին և վերանայված գծերը  
(մեկ չափահաս անձին համարժեք սպառում, ՀՀ դրամով, 2019թ.)**

	Պարենային աղքատության գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ
2009թ. գծեր, 2019թ. գներ	25 300	35 654	43 290
2019թ. գծեր, 2019թ. գներ	23 763	35 054	53 043
Տոկոսային տարբերություն	-6.08%	-1.68%	+22.53%

**Աղբյուր.** SSԿԱՀ 2009 և SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Նշում.** 2009-2019թթ. ժամանակահատվածում կուտակային գնաճը կազմել է 44.7% պարենային ապրանքների և 33.9% ոչ պարենային ապրանքների համար:


2019 թվականի գամբյուղի հիման վրա հաշվարկված պարենային աղքատության գիծը կարող է 2009 թվականի գծի վերանայումից հետո հաշվարկվածից ցածր լինել, քանի որ, հնարավոր է, պարենային ՍԳԻ-ն համեմատվող բնակչության սննդակարգի առումով ներկայացուցչական չէ: Եթե 2009-2019թթ. ժամանակահատվածում միջին բնակչության կողմից սպառված սննդամթերքի գինն աճեր ավելի արագ տեմպերով, քան բնակչության համեմատաբար աղքատ խավերի կողմից սպառվող սննդամթերքի գինը, ապա ըստ գների փոփոխության ճշգրտված, սակայն 2009 թվականի սպառողական գամբյուղի հիման վրա հաշվարկված պարենային աղքատության գիծը կգերազանհատեր այն նվազագույն ծախսը, որը 2019 թվականին անհրաժեշտ է համեմատվող բնակչության էներգիայի օրական պահանջը բավարարելու համար:

SSԿԱՀ 2019-ով հաշվարկված աղքատության մակարդակները տարբերվում են 2009-2018թթ. ժամակահատվածում հաշվարկվածներից երեք առումով. (ա) սպառման ազդեցացված ցուցանիշը հաշվարկվել է SSԿԱՀ-ի վերանայված հարցաթերթի տվյալների հիման վրա, (բ) SSԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետի) միջոցով, և (գ) փոխվել են աղքատության գծերի հաշվարկման հիմքերը: Ստորև ցույց է տրված, թե ինչպես կփոխվեր աղքատության մակարդակը, եթե աղքատության գիծը չվերանայվեր, այսինքն՝ եթե 2019 թվականին աղքատությունը գնահատվեր 2009 թվականի սպառողական գամբյուղի հիման վրա՝ ըստ գնաճի ճշգրտվելուց հետո: Այս մոտեցումն ապահովում է աղքատության գծի իրական արժեքի պահպանումը, սակայն հաշվի չի առնում սպառման ազդեցատի տարբերությունները, որոնք բխում են տվյալների հավաքման եղանակի և հետազոտության իրականացման մեթոդների փոփոխություններից:

Ստորև ներկայացված գծապատկերը ցույց է տալիս 2009-2019թթ. ժամանակահատվածում աղքատության ստորին և վերին մակարդակների փոփոխությունների «համադրելի» դինամիկան՝ որպես ելակետ ընդունելով 2009 թվականի և 2019 թվականի աղքատության գծերը<sup>1</sup>: Ըստ 2009 թվականի ելակետային աղքատության գծերի (ցույց են տրված կապույտով), 2019 թվականին աղքատության վերին մակարդակը կկազմեր 24.9%, ինչը 1.5 տոկոսային կետով բարձր է 2018 թվականի ցուցանիշից, իսկ աղքատության ստորին մակարդակը կաճեր 0.5 տոկոսային կետով՝ 10.6%-ից մինչև 11.1%: Նմանապես, փոփոխությունների «գուզահետ» դինամիկա կարելի է պատկերել՝ որպես ելակետ ընդունելով 2019 թվականի աղքատության գծերը և վերահաշվարկելով 2009 թվականի աղքատության մակարդակները: Այդ վարժության արդյունքը Գծապատկեր 3-ում ներկայացված է կարմիր գծերով:

<sup>1</sup> Այս գծապատկերին համապատասխան աղյուսակները ներկայացված են հավելվածում (Աղյուսակ Ա1925):

**Գծապատկեր 3. Աղքատության «նոր» և «հին» զծերի կիրառմամբ աղքատության ցուցանիշների փոփոխության համադրելի դինամիկան**



**Աղբյուր.** SSԿԱՀ 2009-2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

Սպառման ազդեցատի վրա հետազոտության գործիքների, տվյալների հավաքման եղանակի և հետազոտության իրականացման մեթոդների փոփոխության ազդեցությունը դժվար է քանակապես գնահատել՝ 2019 թվականի ազդեցացված ցուցանիշներին համադրելի ընտրանքի բացակայության պատճառով: Վիճակագրորեն համարժեք ընտրանքի բացակայության պարագայում 2019 թվականին մեկ չափահաս անձին համարժեք միջին ծախսը (համախառն և ըստ ենթաազդեցատների) համեմատվում են 2018 և 2017 թվականների համապատասխան ցուցանիշների հետ:

Այդուսակ 9-ը ցույց է տալիս դրական սպառում նշած տնային տնտեսությունների համամասնությունը, դրական սպառմամբ պայմանավորված մեղիան սպառումը (անվանական արժեքներով) և դրական սպառմամբ չպայմանավորված մեղիան սպառումը (անվանական արժեքներով): 2019 թվականի սպառման ցուցանիշները երբեմն ոչ կանոնավոր արժեքներ ունեն՝ տարիների ընթացքում ընտրանքի նորմալ տատանումների պարագայում ակնկալվողի համեմատ: Օրինակ՝ տնից դուրս սննդի սպառման մասին նշող տնային տնտեսությունների մասնաբաժինը 2017 և 2018 թվականներին 16-17 % է, իսկ 2019 թվականին՝ 28 %: Նշանակալից աճ է նկատվում նաև այն տնային տնտեսությունների մասնաբաժնի մեջ, որոնք նշում են կրթության և առողջապահության ոլորտի ծախսերի մասին: Հատկանշական է, որ առողջապահությունն ու կրթությունը ծախսերի այն դասերից են, որոնք SSԿԱՀ 2019-ում օրագրայինից տեղափոխվել են ոչ օրագրային մոդուլներ: Մյուս կողմից, 2019 թվականին նախորդ երկու տարվա համեմատ նկատելիորեն նվազել է այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք նշում են հագուստի և կոշիկների, բնակարանի ընթացիկ սպասարկման, կապի, տրանսպորտի, հանգստի և մշակույթի, տարբեր ապրանքների և ծառայությունների զծով ծախսերի մասին: 2019 թվականին ռեստորանների և հյուրանոցների վրա ծախսերի մասին նշած տնային տնտեսություններ չեն եղել: Թեպետ սպառման օրինաչափությունները ժամանակի ընթացքում փոխվում են, երկու հաջորդական տարվա ընթացքում կտրուկ փոփոխություններն արտասովոր են և ավելի շուտ կարող են բացատրվել գնահատման մեթոդաբանության առնչվող հարցերով, քան մարդկանց սովորությունների և սովորույթների «իրական» փոփոխություններով:

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ 9. Սպառման օրինաչափությունների համեմատությունը 2017-2019թթ.**

**(ՀՀ դրամով, անվանական արժեքներով)**

Սպառման դասեր	Տնային տնտեսություններ, որոնց սպառումը > 0			Մեղիան սպառում (սպառումը > 0)			Մեղիան սպառում (դրական սպառմամբ չպայմանավորված)		
	2017թ.	2018թ.	2019թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2017թ.	2018թ.	2019թ.
01 - Մննդամթերք	100.0%	100.0%	100.0%	82 744	81 226	80 163	82 744	81 226	80 163
1.1 - Հաց և հացամթերք	100.0%	100.0%	100.0%	19 029	18 022	17 864	19 029	18 017	17 864
1.2 - Միս	99.0%	99.0%	96.0%	15 223	15 949	16 574	15 040	15 757	15 908
1.3 - Ձուկ	40.0%	43.0%	33.0%	3 180	2 871	4 717	1 281	1 239	1 563
1.4 - Կաթ, պանիր և ձու	100.0%	100.0%	100.0%	11 558	11 182	11 714	11 556	11 174	11 710
1.5 - Բուսական յուղ և ճարպեր	100.0%	100.0%	100.0%	4 540	4 210	4 357	4 528	4 208	4 356
1.6 - Մրգեր	92.0%	94.0%	87.0%	5 548	5 493	4 884	5 100	5 144	4 226
1.7 - Բանջարեղեն	100.0%	100.0%	100.0%	13 402	13 444	13 517	13 394	13 440	13 515
1.8 - Շաքար, ջեմ, մեղր, շոկոլադ և քաղցրեղեն	97.0%	98.0%	92.0%	8 622	8 058	6 525	8 401	7 930	5 983
1.9 - Այլ պարենային ապրանքներ	100.0%	100.0%	100.0%	859	996	1 568	859	996	1 567
1.10 - Կոֆե, թեյ և կակաո	100.0%	100.0%	100.0%	2 662	2 403	2 667	2 656	2 395	2 662
1.11 - Ոչ ալկոհոլային խմիչքներ	44.0%	48.0%	32.0%	2 026	1 943	2 496	900	927	809.88
Տնից դուրս սպառված սննդամթերք	16.0%	17.0%	28.0%	12 375	9 906	13 652	1 940	1 727	3 773
02 - Ալկոհոլ, ծխախոտ և թմրանյութեր	46.0%	48.0%	45.0%	14 761	14 291	15 938	6 722	6 915	7 172
03 - Հագուստ և կոշիկեղեն	38.0%	39.0%	25.0%	16 344	17 659	28 296	6 190	6 930	7 121
04 - Բնակարանային պայմաններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	100.0%	100.0%	100.0%	26 073	26 461	24 185	26 043	26 461	24 156
05 - Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում	91.0%	91.0%	82.0%	3 774	4 154	5 716	3 451	3 793	4 699
06 - Առողջապահություն	59.0%	58.0%	64.0%	28 766	29 775	35 697	16 848	17 121	22 982
07 - Տրանսպորտ	71.0%	76.0%	53.0%	19 561	19 666	17 741	13 886	14 985	9 361
08 - Կապ	96.0%	97.0%	86.0%	7 808	7 734	6 450	7 461	7 527	5 577
09 - Հանգիստ և մշակույթ	39.0%	35.0%	15.0%	10 375	9 727	6 460	4 013	3 366	956
10 - Կրթություն	13.0%	12.0%	31.0%	34 937	41 788	16 269	4 434	5 158	4 962
11 - Հյուրանոցներ և ռեստորաններ	0.0%	0.0%	100.0%	100 000	210 000		165	740	
12 - Տարբեր ապրանքներ և ծառայություններ	95.0%	95.0%	82.0%	7 752	7 612	7 859	7 335	7 219	6 477
Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ	100.0%	100.0%	100.0%	24 421	24 082	26 251	24 419	24 080	26 251

**Աղբյուր.** ՏՏԿԱՀ 2017-2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Ծանոթ.** Մեղիան սպառումը հաշվարկված է ըստ բնակչության տեսակարար կշռի:

**Գլուխ 5. Կայունության ստուգումներ**

Այս բաժնում ներկայացված են աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը գնահատելու նպատակով կատարված մի շարք այլ կայունության ստուգումների արդյունքները:

### 5.1 Վարձավճարներ

Ինչպես արդեն քննարկվել է, բնակարանի սեփականատեր տնային տնտեսությունների համար բնակության պայմաններից ստացած օգուտները հաշվարկելու ստանդարտ մեթոդը խնդրահարույց է՝ հեղոնիկ ռեգրեսիան կիրառելու ընտրանքը չափազանց փոքր լինելու պատճառով: Այնուամենայնիվ, վերլուծությամբ ստուգվում է, թե աղքատության գծերը և աղքատության մակարդակը որքանով են զգայուն վարձակալների կողմից վճարվող վարձավճարների ներառման նկատմամբ: Ինչպես երևում է ստորև բերված Աղյուսակ 10-ում, վարձակալների կողմից վճարվող վարձավճարն ավելացնելը նվազագույն ազդեցություն է ունենում աղքատության ստորին և վերին գծերի, ինչպես նաև աղքատության համապատասխան մակարդակների վրա:

**Աղյուսակ 10. Վարձակալների կողմից վճարվող վարձավճարների ներառման նկատմամբ աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը**

Սպառման ագրեգատ	Աղքատության ստորին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության ստորին մակարդակ (տոկոս)	Աղքատության վերին մակարդակ (տոկոս)	Աղքատության վերին գիծ (ՀՀ դրամ)
Վարձավճարի բացառմամբ (էյակետային)	35 054	10.19	43.79	53 043
Վարձակալների կողմից վճարվող վարձավճարի ներառմամբ	35 075	9.72	43.38	53 500

**Աղբյուր.** SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Նշում.** Աղքատության բոլոր գծերը սահմանված են մեկ չափահաս անձին համարժեք ամսական սպառմամբ՝ ՀՀ դրամով:

### 5.2 Առողջապահության ծախսեր

Որոշակի բանավեճ կա առ այն, թե արդյոք առողջապահության ծախսերը պետք է ներառվեն բարեկեցության ագրեգացված ցուցանիշներում: Առողջապահության ծախսերը միանվագ բնույթ ունեն, հետևաբար դրանք զգայուն են հաշվետու ժամանակաշրջանի ընտրության նկատմամբ: Բացի այդ, առողջապահության ծախսերի աճը կարող է վկայել տնային տնտեսության բարեկեցության մակարդակի նվազման մասին, քանի որ կարող է անդամների առողջության վատթարացման հետևանք լինել: Առողջապահության ընդհանուր ծախսերը դժվար է բաժանել բարեկեցության մակարդակի բարձրացմանը և նվազեցմանը նպաստող ենթաբաղադրիչների: Առաջարկվող էմպիրիկ ստուգման մեթոդը հետևյալն է՝ առողջապահության ծախսերը ներառվում են, եթե դրանք բարձր էլաստիկություն ունեն համախառն սպառման ագրեգատի նկատմամբ: 1-ից բարձր էլաստիկությունը ենթադրում է, որ առողջապահության ծախսերը հայեցողական են:

Ստորև ներկայացված Աղյուսակ 11-ը ցույց է տալիս առողջապահության ծախսերի տարբեր բաղադրիչների (հիվանդանոցային ծառայություններ, բուժօգնություն և դեղամիջոցներ) էլաստիկությունն համախառն սպառման նկատմամբ: Էլաստիկության ցուցանիշները ցածր են սպառման ագրեգատի մեջ ներառելու համար առաջարկվող արժեքներից: Սա ցույց է տալիս, որ դրանց ներառումը չի նպաստի աղքատների ավելի ճշգրիտ բացահայտմանը և կարող է հանգեցնել խտրական գնահատականների (Դիթոն և Չաիդի, 2002թ. ):

Այնուամենայնիվ, առողջապահության ծախսերը պահպանվում են բարեկեցության ագրեգատի մեջ՝ երկու հիմնական պատճառով: Նախ, առողջապահության ծախսերը ներառված էին «հին» սպառման ագրեգատի մեջ (ստացվում էին SSԿԱՀ տվյալների հիման վրա), ուստի դրանց բացառումը

**Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը**

Երկու ագրեգատները նվազ համադրելի կդարձնի: Երկրորդ՝ Հայաստանը բարեփոխում է առողջապահության ապահովագրության համակարգը և ներդնում համապարփակ բժշկական ապահովագրություն, որի պայմաններում մարդկանց գրպանից ուղղակիորեն վճարված առողջապահական ծախսերը ոլորտային քաղաքականության ընթացիկ քննարկումների կարևոր մասն են կազմում:

**Աղյուսակ 61. Համախառն սպառման նկատմամբ առողջապահության ծախսերի էլաստիկությունը**

Փոփոխականներ	Սպառման լոգարիթմ առողջապահության և ծախսերի ներառմամբ	Լոգարիթմ հիվանդանոցային և ծառայությունների ծախսերով	Լոգարիթմ բուժօգնության ծախսերով	Լոգարիթմ դեղամիջոցների ծախսերով
Սպառման լոգարիթմ առանց առողջապահության ծախսերի	0.460*** (0.0496)			
Սպառման լոգարիթմ առանց հիվանդանոցային ծառայությունների ծախսերի		0.638*** (0.106)		
Սպառման լոգարիթմ առանց բուժօգնության ծախսերի			0.342** (0.168)	
Սպառման լոգարիթմ դեղամիջոցների ծախսերի				0.436*** (0.0390)
Հաստատուն	3.749*** (0.597)	1.035 (1.295)	5.993*** (2.054)	3.731*** (0.471)
Դիտարկումներ	3,262	843	373	3,056
R-ի քառակուսի	0.026	0.042	0.011	0.039

**Աղբյուր.** SSYԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ  
\*, \*\* և \*\*\* նշանները ցույց են տալիս համապատասխանաբար 10, 5 և 1 տոկոս նշանակալիությունը:

Առողջապահության ծախսերի բացառումը կարող է ազդել աղքատության գծերի վրա՝ պարենային աղքատության գծի հաշվարկման նպատակով համեմատվող բնակչության, ոչ պարենային սպառման մասնաբաժնի և համախառն սպառման մակարդակի փոփոխությունների միջոցով: Այնուամենայնիվ, աղքատության գծերը և աղքատության մակարդակները առողջապահական ծախսերի բացառման նկատմամբ կայուն են (Աղյուսակ 12):

**Աղյուսակ 127. Առողջապահության ծախսերի բացառման նկատմամբ աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը**

Սպառման ագրեգատ	Պարենային աղքատության գիծ (ՀՀ դրամ)	Պարենային աղքատության մակարդակ (%)	Աղքատության ստորին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության ստորին մակարդակ (%)	Աղքատության վերին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության վերին մակարդակ (%)
Առողջապահական ծախսերի ներառմամբ (Ելակետային)	23 763	1.45	35 054	10.19	53 043	43.79
Առողջապահական ծախսերի բացառմամբ	23 431	1.60	33 810	12.17	49 364	43.95

**Աղբյուր.** SSYԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ  
**Նշում.** Աղքատության բոլոր գծերը սահմանված են մեկ չափահաս անձին համարժեք ամսական սպառմամբ՝ ՀՀ դրամով:

**5.3 Տնային տնտեսության անդամների բացակա օրերի մասով ճշգրտումը**

Ինչպես արդեն քննարկվել է, մեկ չափահաս անձին համարժեք սպառման հաշվարկներում կատարվում է ճշգրտում ըստ հետազոտության ժամանակահատվածում տնային տնտեսության անդամների՝ տնից բացակայած օրերի քանակի: Հավելվածի Ա13 աղյուսակը ցույց է տալիս, որ հետազոտության ժամանակահատվածում տնային տնտեսությունների 76.2%-ի առնվազն մեկ անդամ առնվազն մեկ օրվա ընթացքում բացակայել է տնից: Սա արտացոլվում է նաև աղքատության գծերի և աղքատության մակարդակների վրա, քանի որ դրանք զգայուն են տնային տնտեսության անդամների բացակայած օրերի մասով ճշգրտման նկատմամբ (Աղյուսակ 13):

**Աղյուսակ 13. Տնային տնտեսության անդամների բացակա օրերի նկատմամբ աղքատության գծերի և աղքատության մակարդակների զգայունությունը**

Սպառման ագրեգատ	Պարենային աղքատության գիծ (ՀՀ դրամ)	Պարենային աղքատության մակարդակ (%)	Աղքատության ստորին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության ստորին մակարդակ (%)	Աղքատության վերին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության վերին մակարդակ (%)
Բացակա օրերի մասով ճշգրտված (Ելակետային)	23 763	1.45	35 054	10.19	53 043	43.79
Բացակա օրերի մասով չճշգրտված	23 608	2.08	34 626	13.05	52 051	46.79

**Աղբյուր.** ՏՏԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Ծանոթ.** Աղքատության բոլոր գծերը սահմանված են մեկ չափահաս անձին համարժեք ամսական սպառմամբ՝ ՀՀ դրամով:

**Գլուխ 6. Քննարկում, եզրահանգումներ և առաջարկներ**

Այս վարժության հիմնական նպատակը Հայաստանի համար սպառման ագրեգացված ցուցանիշը, աղքատության ազգային գծերը և աղքատության ազգային մակարդակների վերանայումն է՝ օգտագործելով ՏՏԿԱՀ 2019-ի տվյալները, որը տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի վերաբերյալ ամենաթարմ հետազոտությունն է: Սույն նյութում նկարագրվում են գործընթացի տեխնիկական և մեթոդաբանական տեսանկյունները: Վերանայման արդյունքում արձանագրված երկու իրողություն հանգամանակից բացատրություն են պահանջում. (1) Ինչո՞ւ են աղքատության վերին գիծը և աղքատության վերին մակարդակը 2019 թվականին 2018 թվականի համեմատ կտրուկ աճում, և (2) Ինչո՞ւ են աղքատության վերին և ստորին մակարդակները 2019 թվականին աճում նույնիսկ այն դեպքում, երբ որպես ելակետ վերցնում ենք 2009 թվականի սպառողական զամբյուղի հիման վրա հաշվարկված աղքատության գծերը:

Ինչպես ավելի վաղ նշվել է, ըստ 2019 թվականի վերանայված աղքատության գծի աղքատության վերին մակարդակը հասնում է 43.8%-ի՝ ի համեմատություն 2018 թվականի 23.5% ցուցանիշի: Այս աճը հիմնականում պայմանավորված է աղքատության գծի վերանայմամբ, որի նպատակն է արտացոլել 2019 թվականի դրությամբ առկա սպառման օրինաչափությունները: Հայաստանում աղքատության ազգային գծերը վերջին անգամ սահմանվել են ՏՏԿԱՀ 2009-ի տվյալների հիման վրա: Մինչև 2018 թվականը Հայաստանում աղքատության տարեկան գնահատումը հիմնված է եղել աղքատության գծերի տարեկան վերանայման վրա՝ սպառողական գների ինդեքսի (ՄԳԻ) կիրառությամբ: Գնաճի համեմատ այս ճշգրտումը հաշվի է առնում տնտեսությունում գների մակարդակի փոփոխությունները՝ անփոփոխ պահելով աղքատության գծերի իրական արժեքը:

## Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Այդուհանդերձ, այս ճշգրտումը հաշվի չի առնում իրական կյանքում սպառման օրինաչափությունների փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ժամանակի ընթացքում: Իրականում պարենային աղքատության գծի և աղքատության վերին գծի հարաբերակցությունը 2009 թվականին կազմել է 56.5%, իսկ 2019 թվականին՝ ընդամենը 44.8%: Սա նշանակում է, որ համեմատվող տնային տնտեսություններում ըստ աղքատության վերին գծի սննդամթերքի սպառման մասնաբաժինը 2019 թվականին 2009 թվականի համեմատ զգալիորեն ցածր է, ինչն իր հերթին բարձրացնող ազդեցություն է ունենում աղքատության վերին գծի վրա:

Թեպետ աղքատության գծերի հաշվարկման հիմքերի փոփոխության անհրաժեշտությունն ակնհայտ է, եթե աղքատության գծերը 2019 թվականին չվերանայվեին, այլ փոխարենը՝ 2009 թվականի գծերը պարզապես ճշգրտվեին ըստ 2019 թվականի գների, աղքատության վերին մակարդակը 2019 թվականին այնուամենայնիվ 1.5 տոկոսային կետով կգերազանցեր 2018 թվականի 24.9% ցուցանիշը: Այս աճը կարելի է բացատրել ՏՏԿԱՀ 2018-ի և ՏՏԿԱՀ 2019-ի հարցաթերթերի տարբերությամբ: ՏՏԿԱՀ 2019-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետի) միջոցով, և օրագրի վարման տևողությունը կրճատվել է՝ 30 օրից դառնալով 14 օր: Բացի այդ, սպառման մի քանի մոդուլներ, որոնք նախկինում մտնում էին տնային տնտեսության կողմից վարվող օրագրի մեջ, փոխադրվել են ոչ օրագրային մոդուլներ. դրանց թվում են առողջապահություն, կապի և կրթության վերաբերյալ մոդուլները: Ինչպես վերը ներկայացվել է, դա կարող է ազդած լինել սպառողական զամբյուղի հաշվարկի վրա:

Հաշվի առնելով աղքատության գծերի վերանայումը, տվյալների հավաքման եղանակի և հարցաթերթի կառուցվածքի փոփոխությունները՝ դժվար է քանակապես գնահատել, թե այդ գործոններից յուրաքանչյուրն ինչպես է ազդել 2019 թվականին աղքատության վերին մակարդակի աճի վրա: Այնուամենայնիվ, դա գնահատելու միջոցներից մեկը կլինի հետևյալի դիտարկումը. ինչպիսի՞նք կլինեն աղքատության վերին և ստորին մակարդակների փոփոխության դինամիկան, եթե աղքատության գծերն ամեն տարի վերագնահատվեին: Մենք ամեն տարի վերահաշվարկում ենք աղքատության վերին և ստորին գծերը՝ համեմատվող բնակչության պարենային և ոչ պարենային ծախսերի մասնաբաժնի կիրառությամբ վերանայելով ԱՍԳ-ն և ԱՎԳ-ն, ինչպես նաև սպառման ազդեցատի հաշվարկի մեջ կատարելով ճշգրտում ըստ սպառողական գների ինդեքսի: Ստորև բերված Աղյուսակ 14-ը ցույց է տալիս ժամանակի ընթացքում այդ ցուցանիշների փոփոխությունների դինամիկան<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, եթե աղքատության գծերն ամեն տարի ճշգրտված լինեին, 2018 թվականին աղքատության վերին մակարդակը զգալիորեն ավելի բարձր կլիներ (45.4%՝ 23.5%-ի համեմատ), իսկ 2019 թվականի ցուցանիշը շուրջ 1.5 տոկոսային կետով նվազած կլիներ (43.8%):

<sup>1</sup> Առկա միկրոտվյալների վրա հիմնվելով՝ վերահաշվարկը չի կարող կրկնել 2009 թվականի աղքատության պաշտոնական գծերը: 2009 թվականի համար վերահաշվարկված մակարդակները (ԱՍԳ = 10,5% և ԱՎԳ = 34,6%) աղյուսակում ցույց չեն տրված:



**Աղյուսակ 8. Ինչպիսի՞ն կլինեն աղքատության վերին և ստորին մակարդակների փոփոխության դինամիկան, եթե աղքատության գծերն ամեն տարի վերագնահատվեն**

Տարի	Ամեն տարի վերահաշվարկված աղքատության գծեր		2009 թվականի աղքատության գծեր՝ ամեն տարի վերանայված ըստ պարենային և ոչ պարենային ՍԳԻ-ի	
	ԱՍԳ	ԱՎԳ	ԱՍԳ	ԱՎԳ
2009թ.	20.10%	34.10%	20.10%	34.10%
2010թ.	17.00%	41.80%	21.30%	35.80%
2011թ.	19.20%	41.30%	19.90%	35.00%
2012թ.	11.50%	40.20%	13.50%	32.40%
2014թ.	11.30%	41.10%	10.80%	29.90%
2016թ.	10.40%	41.10%	9.70%	29.40%
2017թ.	11.00%	47.50%	10.60%	25.70%
2018թ.	11.20%	45.40%	10.60%	23.50%
2019թ.	10.19%	43.79%	10.19%	43.79%

**Աղբյուր.** ՏՏԿԱՀ տվյալների հիման վրա հաշվարկներ

**Նշում.** 2013 և 2015 թվականների անհրաժեշտ տվյալներն անհասանելի են: 2016 թվականի համար որպես հիմք վերցվել են միջին գները, տեղային տատանումների վերաբերյալ տվյալները բացակայում են:

Ամփոփելով՝ նշենք, որ թեպետ 2019 թվականին աղքատության վերին մակարդակը 2018 թվականի համեմատ զգալիորեն բարձր է, դա հիմնականում պայմանավորված է 2018 թվականին աղքատության գծերը թերագնահատված լինելու հանգամանքով: Հաշվի առնելով, որ աղքատության գծերը վերջին անգամ սահմանելուց հետո անցել է 10 տարի, խորհուրդ է տրվում այսուհետ դրանք պարբերաբար (առնվազն 5 տարին մեկ) վերանայել:

**Հղումներ**

Նիկոլա Ամենդոլա և Ջովաննի Վեջի  
(2011թ.)  
Անգուս Դիթոն և Սալվան Ջաիդի (2002թ.),

Վիճակագրության զարգացման Եվրոպայի և  
Կենտրոնական Ասիայի աշխատանքային  
խումբ (ECATSD) (2019թ.)  
ՊԳԿ (2004թ.)

ՊԳԿ, ԳԶՄՀ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՊՀԾ և ԱՀԿ  
(2020թ.),

Ջոնաթան Հաֆթոն և Շահիդուր Խանդկեր  
(2009թ.)  
Ա. Սեն (1985a)

Միավորված ազգերի կազմակերպության  
Տնտեսական և սոցիալական հարցերի  
դեպարտամենտ (2018թ.)  
Համաշխարհային բանկ (2011թ)

*«Իրաքի համար աղքատության զծի սահմանումը»,  
Վաշինգտոն, Համաշխարհային բանկ  
«Բարեկեցության վերլուծության համար սպառման  
ազդեցատների սահմանման ուղեցույցներ»,  
Վաշինգտոն, Համաշխարհային բանկ  
«ECAPOV 3.0 ներդաշնակեցման ուղեցույցներ»*

*«Մարդու էներգիայի պահանջները», հասանելի է  
հետևյալ հղմամբ՝*

*<http://www.fao.org/3/y5686e/y5686e00.htm#Contents>*

*«2020 թվականին սննդամթերքի անվտանգության և  
սնուցման վիճակն աշխարհում», «Սննդային  
համակարգերի փոխակերպումը՝ մասշեղի և առողջ  
սննդակարգեր ապահովելու նպատակով», Հոռմ, ՊԳԿ  
«Ձեռնարկ աղքատության և անհավասարության  
մասին», Վաշինգտոն, Համաշխարհային բանկ  
«Ապրանքներ և ունակություններ», Ամստերդամ,  
Հյուսիսային Հոլանդիա*

*«Անհատական սպառման դասակարգում ըստ  
նպատակի» (COICOP) 2018*

*«Հայաստանում աղքատության գնահատումն ըստ  
աղքատության վերանայված զծերի»*

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

Հավելված

**Աղյուսակ Ա 9. Հայաստանում ոչ պարենային սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ) եռամսյակային կտրվածքով, 2009-2019թթ.**

Տարի	Եռամսյակ			
	1	2	3	4
2009թ.	0.997	0.998	1.004	1.021
2010թ.	0.978	1.003	1.005	1.014
2011թ.	0.989	0.999	1.001	1.009
2012թ.	0.991	0.997	1.001	1.012
2013թ.	0.969	0.979	1.021	1.030
2014թ.	0.993	0.993	1.000	1.014
2015թ.	0.992	1.002	0.999	1.001
2016թ.	1.009	1.003	0.990	1.007
2017թ.	0.995	0.997	0.999	1.009
2018թ.	0.996	1.001	0.999	1.004
2019թ.	0.991	0.999	1.002	1.007

Աղբյուր. ԱՐՄՍՍՍ

**Աղյուսակ Ա 2. Երկարաժամկետ օգտագործման սպրանքների ցանկը**

Ավտոմեքենա	Գագօջախ	«Այլ» դասի սպրանքներ
Մոտոցիկլետ	Միկրոայիքային վառարան	
Հեծանիվ	Էլեկտրական վառարան	Ջեռուցման համակարգ
Բջջային հեռախոս	Էլեկտրական ջեռուցիչ	Բլենդեր
Անհատական համակարգիչ (նոր կամ օգտագործված)	Սպասք լվացող մեքենա	Հացի կտրիչ
Հեռուստացույց (սև/սպիտակ կամ գունավոր)	Սառնարան	Էլեկտրական խառնիչ
Պարաբոլային ալեհավաք	Լվացքի մեքենա	Էլեկտրական ջրատաքացուցիչ
Օդորակիչ	Վարսահարդարիչ	Թեյնիկ
Տեսաձայնագրիչ	Կարի մեքենա	Մսաղաց
Տեսախցիկ	Արդուկ	Երաժշտական գործիքներ
Ֆոտոխցիկ	Փռչեկուկ	Պլանշետ
Աուդիո համակարգ (երաժշտական)	Կահույք	Արևային ջրատաքացուցիչ
Էլեկտրական սալօջախ	Գորգ	

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2019

**Աղյուսակ Ա 3. Նորածինների մարմնի միջին քաշը և էներգիայի պահանջը**

Տարիքը (ամիսներով)	Տղաներ		Աղջիկներ	
	Մարմնի քաշը (կգ)	Էներգիայի պահանջը (կկալ/կգ/օր)	Մարմնի քաշը (կգ)	Էներգիայի պահանջը (կկալ/կգ/օր)
0	4.58	113	4.35	107
1	5.50	104	5.14	101
2	6.28	95	5.82	94
3	6.94	82	6.41	84
4	7.48	81	6.92	83
5	7.93	81	7.35	82
6	8.30	79	7.71	78
7	8.62	79	8.03	78
8	8.89	79	8.31	78
9	9.13	80	8.55	79
10	9.37	80	8.78	79
11	9.62	81	9.00	79

Աղբյուր. ՊԳԿ, 2004թ.

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ Ա 10. Մարմնի միջին քաշը և էներգիայի պահանջը**

Տարիքը (տարիներով)	Տղամարդիկ		Կանայք	
	Էներգիայի պահանջը (կկալ/օր)	Մարմնի քաշը (կգ)	Էներգիայի պահանջը (կկալ/օր)	Մարմնի քաշը (կգ)
0	86.2/կգ	7.7	85.2/կգ	7.2
1	82.4/կգ	11.5	80.1/կգ	10.8
2	83.6/կգ	13.5	80.6/կգ	13.0
3	79.7/կգ	15.7	76.5/կգ	15.1
4	76.8/կգ	17.7	73.9/կգ	16.8
5	74.5/կգ	19.7	71.5/կգ	18.6
6	72.5/կգ	21.7	69.3/կգ	20.6
7	70.5/կգ	24.0	66.7/կգ	23.3
8	68.5/կգ	26.7	63.8/կգ	26.6
9	66.6/կգ	29.7	60.8/կգ	30.5
10	64.6/կգ	33.3	57.8/կգ	34.7
11	62.4/կգ	37.5	54.8/կգ	39.2
12	60.2/կգ	42.3	52.0/կգ	43.8
13	57.9/կգ	47.8	49.3/կգ	48.3
14	55.6/կգ	53.8	47.0/կգ	52.1
15	53.4/կգ	59.5	45.3/կգ	55.0
16	51.6/կգ	64.4	44.4/կգ	56.4
17	50.3/կգ	67.8	44.1/կգ	56.7
18-29	$(15.057 \times \text{կգ} + 692.2) \times \text{\$ԱՄ}$	74.6	$(14.818 \times \text{կգ} + 486.6) \times \text{\$ԱՄ}$	66.4
30-59	$(11.472 \times \text{կգ} + 873.1) \times \text{\$ԱՄ}$	74.6	$(8.126 \times \text{կգ} + 845.6) \times \text{\$ԱՄ}$	66.4
>60	$(11.711 \times \text{կգ} + 587.7) \times \text{\$ԱՄ}$	74.6	$(9.082 \times \text{կգ} + 658.5) \times \text{\$ԱՄ}$	66.4

Նշում. Մարմնի քաշի վերաբերյալ տվյալները 0-17 տարեկանների համար վերցվել են ՊԳԿ-ից (2004թ.), 18 և բարձր տարիքի անձանց համար ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտից: Մինչև մեկ տարեկան նորածինների համար օգտագործվել են 0-11 ամսականների մարմնի քաշի վերաբերյալ տվյալները:

**Աղյուսակ Ա11ա. Հղի և կրծքով կերակրող կանանց վերաբերյալ տվյալներ**

Հղի և 0-11 ամսական երեխաներ ունեցող կանայք						
Տարիքը (տարիներով)	Հղի կանայք		0-6 ամսական նորածիններ		7-11 ամսական նորածիններ	
	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական
16	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%
17	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%
18-29	0.97%	1.14%	5.84%	5.34%	3.81%	4.48%
30-59	0.20%	0.19%	1.35%	0.96%	1.17%	0.57%
>60	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ Ա12բ. Հղի և կրծքով կերակրող կանանց վերաբերյալ տվյալներ**

<b>Հղի և 0-11 ամսական երեխաներ ունեցող կանայք</b>						
Տարիքը (տարիներով)	Հղի կանայք		0-6 ամսական նորածիններ		7-11 ամսական նորածիններ	
	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային
16	1.25%	1.33%	0.00%	0.00%	0.00%	0.00%
17	0.00%	1.16%	0.00%	1.16%	0.00%	0.00%
18-29	4.96%	6.98%	5.25%	4.61%	3.48%	3.31%
30-59	1.39%	1.01%	0.81%	0.36%	0.59%	0.53%
>60	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%

**Աղբյուր.** Ժողովրդագրական և առողջապահական հետազոտությունների (ԺԱՀ) 2016 թվականի տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Աղյուսակ Ա13. Կալորիականության անհատական օրական պահանջը (ըստ ցածր ՖԱՄ-ի)**

Տարիքը (տարիներով)	Տղամարդիկ	Կանայք	Բոլորը
0	663	623	644
1	948	865	905
2	1 129	1 048	1 091
3	1 251	1 155	1 209
4	1 359	1 242	1 305
5	1 468	1 330	1 404
6	1 573	1 428	1 503
7	1 692	1 554	1 621
8	1 829	1 697	1 770
9	1 978	1 854	1 922
10	2 151	2 006	2 087
11	2 340	2 148	2 250
12	2 546	2 278	2 409
13	2 768	2 381	2 599
14	2 991	2 449	2 718
15	3 177	2 492	2 808
16	3 323	2 504	2 928
17	3 410	2 500	2 965
18-29	2 970	2 463	2 708
30-59	2 815	2 258	2 524
>60	2 369	2 033	2 181
Ընդամենը	2 514	2 112	2 307

**Աղբյուր.** Համաշխարհային բանկի հաշվարկներ

Չափահասների (18 և ավելի տարեկան) ՖԱՄ-ը՝ քաղաքացիներ = 1.53, գյուղացիներ = 1.76: Բոլոր ցուցանիշների չափման միավորը կկալ/ օր է: Կանանց կալորիականության օրական պահանջը ճշգրտվել է հղիության և կրծքով կերակրման շրջանում ավելի մեծ կարիքներին համապատասխան:

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ Ա14. Կալորիականության անհատական օրական պահանջը (ըստ բարձր ՖԱՄ-ի)**

Տարիքը (տարիներով)	Տղամարդիկ	Կանայք	Բոլորը
0	663	623	644
1	948	865	905
2	1 129	1 048	1 091
3	1 251	1 155	1 209
4	1 359	1 242	1 305
5	1 468	1 330	1 404
6	1 573	1 428	1 503
7	1 692	1 554	1 621
8	1 829	1 697	1 770
9	1 978	1 854	1 922
10	2 151	2 006	2 087
11	2 340	2 148	2 250
12	2 546	2 278	2 409
13	2 768	2 381	2 599
14	2 991	2 449	2 718
15	3 177	2 492	2 808
16	3 323	2 504	2 928
17	3 410	2 500	2 965
18-29	3 606	2 974	3 279
30-59	3 405	2 719	3 047
>60	2 856	2 439	2 623
Ընդամենը	2 921	2 456	2 682

Չափահասների (18 և ավելի տարեկան) ՖԱՄ-ը քաղաքացիներ = 1.76, գյուղացիներ = 2.25: Բոլոր ցուցանիշների չափման միավորը կկա/ օր է: Կանանց կալորիականության օրական պահանջը ճշգրտվել է հղիության և կրծքով կերակրման շրջանում ավելի մեծ կարիքներին համապատասխան:

**Աղյուսակ Ա15. Հայաստանի բնակչության ժողովրդագրական կառուցվածքը**

Տարիքային խումբ	Տղամարդ		Բնակչության քանակ	
	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին
0-4	3.16%	2.91%	91 271	84 068
5-9	3.56%	3.12%	102 617	90 066
10-14	3.42%	3.04%	98 708	87 772
15-19	2.66%	2.61%	76 859	75 258
20-24	3.23%	3.01%	93 172	86 850
25-29	3.83%	3.78%	110 594	109 020
30-34	3.79%	3.96%	109 405	114 180
35-39	3.53%	3.61%	101 897	104 094
40-44	2.62%	3.10%	75 622	89 446
45-49	2.48%	2.86%	71 496	82 572
50-54	2.71%	3.29%	78 211	94 868
55-59	3.25%	4.27%	93 729	123 291
60-64	3.28%	3.90%	94 649	112 422
65-69	2.19%	3.19%	63 146	92 139
70-74	1.28%	1.95%	36 914	56 331
75-79	1.09%	1.80%	31 330	51 979
80-84	0.92%	1.35%	26 569	38 964
85+	0.42%	0.81%	12 074	23 376
Ընդամենը	47.43%	52.57%	1 368 261	1 516 696

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ Ա16. Հայաստանում պարենային և ոչ պարենային տարեկան սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ), 2009-2019թթ.**

Տարի	Պարենային ՄԳԻ	Ոչ պարենային ՄԳԻ
2009թ.	99.1	107.4
2010թ.	109.4	107.1
2011թ.	111.4	103.2
2012թ.	102.0	103.1
2013թ.	105.8	105.8
2014թ.	101.7	104.2
2015թ.	103.1	104.2
2016թ.	96.7	99.8
2017թ.	104.1	98.8
2018թ.	102.3	102.6
2019թ.	101.9	101.1

Աղբյուր. ԱՐՄՍՍՍՍ

**Աղյուսակ Ա17. Կալորիականության նվազագույն պահանջը և աղքատության գծերը**

Էներգիայի օրական պահանջ (ԷՊ)	Պարենային աղքատության գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության ստորին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության վերին գիծ (ՀՀ դրամ)	Աղքատության միջին գիծ (ՀՀ դրամ)
2 232	22 988	33 177	53 118	43 148
2 307	23 763	35 054	53 043	44 048
2 412	24 842	36 479	54 284	45 381
2 438	25 110	36 496	55 663	46 080
2 682	27 623	40 629	57 995	49 312

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Աղյուսակ Ա18. Կալորիականության նվազագույն պահանջը և աղքատության մակարդակները**

Էներգիայի օրական պահանջ (ԷՊ)	Պարենային աղքատության մակարդակ (տոկոս)	Աղքատության ստորին մակարդակ (տոկոս)	Աղքատության վերին մակարդակ (տոկոս)	Աղքատության միջին մակարդակ (տոկոս)
2 232	1.1	7.7	44.0	24.5
2 307	1.4	10.2	43.8	26.4
2 412	1.9	12.2	46.2	28.5
2 438	2.0	12.2	48.9	29.9
2 682	3.3	19.9	53.8	36.3

Աղբյուր. ՏՏԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

Հայաստանում աղքատության գնահատման մեթոդաբանությունը

**Աղյուսակ Ա19. Աղքատության համադրելի ցուցանիշների փոփոխության դինամիկան**

Տարի	Աղքատության վերին գիծ		Աղքատության ստորին գիծ	
	2009թ. գիծ	2019թ. գիծ	2009թ. գիծ	2019թ. գիծ
2009թ.	34.09%	51.97%	20.06%	18.63%
2010թ.	35.79%	52.58%	21.27%	14.30%
2011թ.	34.95%	51.75%	19.94%	14.32%
2012թ.	32.40%	39.84%	13.48%	11.48%
2013թ.	32.00%	40.65%	13.31%	11.17%
2014թ.	29.86%	35.90%	10.77%	9.66%
2015թ.	29.80%	36.39%	10.37%	8.86%
2016թ.	29.37%	37.33%	9.74%	10.75%
2017թ.	25.72%	43.96%	10.59%	9.53%
2018թ.	23.51%	40.36%	10.62%	9.48%
2019թ.	24.91%	43.79%	11.12%	10.19%

**Աղբյուր.** SSԿԱՀ 2009-2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Աղյուսակ Ա20. Բացակա անդամներով տնային տնտեսությունների բաշխումը**

Բացակայություն	S/տ մասնաբաժին
Հետազոտության ժամանակահատվածում որևէ անդամ չի բացակայել	76.2%
Հետազոտության ժամանակահատվածում առնվազն մեկ անդամ առնվազն մեկ օրվա ընթացքում բացակայել է տնից	33.8%

**Աղբյուր.** SSԿԱՀ 2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ

**Աղյուսակ Ա21. Սննդամթերքի սպառման մասնաբաժինը (%)**

Սպառման ազդեցատ	Ամբողջ բնակչությունը		2-4 դեցիլային խմբեր	
	Ընդամենը սննդամթերքի սպառման մեջ մասնաբաժինը (2019թ.)	Ընդամենը սննդամթերքի սպառման մեջ մասնաբաժինը (2009թ.)	Ընդամենը սննդամթերքի սպառման մեջ մասնաբաժինը (2019թ.)	Ընդամենը սննդամթերքի սպառման մեջ մասնաբաժինը (2009թ.)
Հաց և հացամթերք	21.3	25.9	24.6	27.2
Միս	19.0	16.0	17.3	14.8
Ձուկ	1.9	1.1	1.9	1.0
Կաթ, պանիր և ձու	14.0	13.9	14.7	14.9
Բուսական յուղ և ճարպեր	5.2	6.0	5.4	6.3
Մրգեր	5.0	9.1	4.4	8.3
Բանջարեղեն	16.1	15.7	17.5	16.3
Շաքար, ջեմ, մեղր, շոկոլադ և քաղցրեղեն	7.1	5.2	6.4	5.1
Այլ պարենային ապրանքներ	1.9	1.1	1.9	1.2
Կոֆե, թեյ և կակաո	3.2	2.8	3.5	3.0
Ոչ ակոհոլային խմիչքներ	1.0	0.6	0.8	0.5
Սննդամթերքի սպառում բացառությամբ ակոհոլի	95.5	97.6	98.4	98.5
Տնից դուրս սպառված սննդամթերք	4.5	2.4	1.6	1.5
Ընդամենը սննդամթերքի սպառում	100.0	100.0	100.0	100.0

**Աղբյուր.** SSԿԱՀ 2009-2019 տվյալների հիման վրա Համաշխարհային բանկի հաշվարկներ